# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 08 (1358) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 15, 2008
VOLUME 28, NO. 08 (1358) SATURDAY, MARCH 15, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

# ՀԱԿԱՌԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՏԻՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԽԱՒԱՐԻՆ
## ՄԱՐՏ 1-Ի ՈՃԻՐՆԵՐՈՒՆ ԾԱԼՔԵՐԸ ԿԱՄԱՑ-ԿԱՄԱՑ Ի ՅԱՅՏ ԿՈՒ ԳԱՆ
## ԹԱԼԱՆՆ ՈՒ ԱՒԵՐԸ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ
## ԾՊՏՈՒԱԾ ՋՈԿԱՏԱՅԻՆՆԵՐ ԿՐԱԿԱԾ ԵՆ ԱՆՄԵՂ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՎՐԱՅ

*Քոչարեանական իշխանութիւններուն կողմէ Հայ ժողովուրդի դէմ գործադրուած ոճիրը կը շարունակէ յուզել ամբողջ հայութիւնը՝ հայրենիքի թէ արտասահմանի մէջ, միաժամանակ դատապարտումի լայն ալիք կը բարձրանայ միջազգային շրջանակներու մօտ:*

*Արտակարգ դրութեան հետեւանքով Հայաստանի ժողովուրդը կը գտնուի տեղեկատուական խաւարի մէջ, իսկ որոշ լուրեր արտասահման կը հասնին «Ազատութիւն» ռատիոկայանի եւ կարգ մը ընդդիմադիր ինթըրնէթային կայքէջերու միջոցաւ:*

*Արդարեւ՝ լոյս չեն տեսներ ընդդիմադիր թերթերը՝ «Հայկական ժամանակ», «Առաւօտ», «Ժամանակ Երեւան», «Չորրորդ Իշխանութիւն» եւ այլ թերթեր: Լոյս կը տեսնէ իշխանութիւններու բանբեր հանդիսացող «Ազգ»-ը:*

*Անաչառ լուրեր հաղորդող հայաստանեան բոլոր կայքէջերը փակուած են, իսկ արտասահմանեան էջերը անհասանելի են ներսի համար:*

*Հակառակ այս լրատուական շրջափակումին, Մարտ 1-ի ողբերգական իրադարձութիւններու եւ իշխանութիւններու գործադրած ոճիրներուն տարողութիւնն ու մաշտապը սկսած է կամաց-կամաց ի յայտ գալ: «Պայքար» ընդդիմադիր թերթը ականատեսներու վկայութիւններուն վրայ հիմնուելով կը գրէ թէ, Սադրիչները դուրս կու գային ոստիկաններու շարքերու ետեւէն:*

*«Գրիգոր Լուսաւորիչ պողոտայի բնակիչներից շատերը, որոնք իրենց պատուհաններից հետեւել են այդ փողոցում տեղի ունեցած Մարտի 1-ի գիշերուայ իրադարձութիւններին, արձանագրել են, թէ ինչպէս են ոստիկանութեան շարքերից դուրս գալիս խումբեր, քարեր ու բենզինով լիքը շշեր նետում խանութների վրայ ու նորից ոստիկանների միջով հանգիստ հետ գնում: Քաղաքացիները վկայում են, որ նոյն Երեւանի քաղաքապետարանի վրայ յարձակուած խումբը դուրս է եկել ոստիկանների շարքերից, ոստիկանները, սիրուն ճանապարհ են բացել նրանց համար եւ այդ նոյն խումբը կրկին վերադարձել է ոստիկանների շարքերի յետեւը: Նոյնը տեղի է ունեցել նաեւ միւս օբիեկտների վրայ*



**Վիտէօ նկարահանումէն առնուած սոյն նկարը, յստակ ցոյց կու տայ թէ ինչպէս Հայ զինուորականներ կը կրակեն իրենց ժողովուրդի վրայ: Թէեւ նկարը ցածորակի՝ զայն կը հրատարակենք յանուն պատմութեան**

*կատարուած յարձակումների ժամանակ»,- կը հաղորդէ «Պայքար» ու կ՚աւելցնէ-. «Ամենազաւեշտականն այն է, որ ոստիկանութեան տեսագրութիւնների մէջ անգամ կան կադրեր, որտեղ յստակ երեւում է,*

**Շար.ը էջ 4**

## ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ
### ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՒ 10 ՀԱԶԱՐԷ ԱՒԵԼԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ ՄԸ



**Տեսարան մը Ուաշինկթընի ցոյցէն**

*Երկուշաբթի Մարտ 10-ին Ուաշինկթընի մէջ տեղի ունեցաւ ցոյց՝ բողոքելու համար Հայաստանի մէջ շարունակուող բռնութիւններուն ու քաղաքական հալածանքներուն դէմ:*

*Հայաստանի դեսպանատան առջեւ հաւաքուած էին, ոչ միայն մայրաքաղաքի փոքրաթիւ հայ գաղութի երիտասարդներ, այլ նաեւ Լոս Անճելըսէն ժամանած Ցանուն Ժողովրդավար Հայաստանի կազմակերպութեան շուրջ 25 ներկայացուցիչներ:*

*Հայաստանի իշխանութիւններու վարքագիծը դատապարտող պաստառներ պարզած, ցուցարարները փորձեցին իրենց գրաւոր պահանջ-*

*Շար.ը էջ 3*

## ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ,- «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱԿԱՆ ԴՐԵՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԼԵԳԻՏԻՄՈՒԹԵԱՆ ՏԱԿ»

*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան Մարտ 11-ին իր տան մէջ մամլոյ ասուլիս հրաւիրելով յայտարարեց, որ Սահմանադրական Դատարան մերժելով Փետրուար 19-ի ընտրութիւնները անվաւեր հռչակելու իր դիմումը, «ական դրեց Սերժ Սարգսեանի լեգիտիմութեան տակ»:*

*«Սահմանադրական դատարանը, իրաւական փակուղու առջեւ չկանգնելու կամ անյարմար վիճակի մէջ չընկնելու համար, խուսափեց անդրադառնալ անցած ընտրութիւնների օրինականութիւնը կասկածի տակ դնող ամենաանուրկելի հիմքերին: Սակայն գերադասելով անտեսել այդ հիմքերը, Դատարանն ընկաւ աւելի անպատուաբեր եւ խայտառակ վիճակի մէջ՝ փաստօրէն լռելեայն անվաւեր ճանաչելով անցած ընտրութիւնները եւ ական դնելով Սերժ Սարգսեանի լեգիտիմութեան տակ»,- ըսաւ Լեւոն Տէր-Պետրոսեան:*

*Լեւոն Տէր-Պետրոսեանը նաեւ փոխանցեց, որ ինք դիմում ուղարկած էր Երեւանի քաղաքապետարան արտակարգ դրութեան վերացումէն յետոյ՝ Մարտի 21-ին Ազատութեան հրապարակի վրայ հանրահաւաք կազմակերպելու համար:*

*Քաղաքապետարանը սակայն մերժած է այդ դիմումը առարկելով որ, միջոցառումը վտանգ կը սպառնայ անձերու կեանքին եւ առողջութեան:*

*«Մենք կը դիմենք նաեւ յաջորդ օրերի համար, բայց չթոյլատրուած հանրահաւաքներ չենք անցկացնելու: Կ՚օգտագործենք բոլոր օրինական միջոցները, ինչպէս արել ենք 5 ամիս շարունակ: Հարիւր տոկոսով վստահ եմ, որ եթէ լինեն հանրահաւաքներ, եւ իշխանութիւնները մահակներ չկիրառեն, ոչ մի խախտում չի լինելու», - ըսաւ Տէր-Պետրոսեան:*

*«Այսօր մենք ունենք բոլորովին ուրիշ հասարակութիւն, ուրիշ ժողովուրդ, քան 6 ամիս առաջ: Ես սա համարում եմ մեր ամենամեծ նուաճումը, իմ կեանքի ամենամեծ յաջողութիւնը: Ես եւ իմ համախոհները հրաշք ենք գործել՝ ստեղծել ենք քաղաքացիական հասարակութիւն, գիտակից հասարակութիւն, ինտելեկտուալ հասարակու-*

**Շար.ը էջ 3**

# «ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՐԹՆԱՑԵԼ Է 10-ԱՄԵԱՅ ԹՄԲԻՐԻՑ ԵՒ ՆՐԱՆ ՔՆԵՑՆԵԼ ՀՆԱՐԱՒՈՐ ՉԷ»

***Հ. ՄԵԼԻՔՍԵԹԵԱՆ***

-Տիկին Սարգսեան, Մարտի 1-ի դէպքերից անցել է շուրջ 7 օր:

Ի՞նչ կ՚ասէք այդ օրը արձանագրուած անցքերի եւ դրանց յաջորդած զարգացումների մասին:

*- Այն, ինչ տեղի ունեցաւ, կանխագուշակելի էր, բայց ոչ այդ մակարդակով: Ինձ թւում էր, թէ այս պետութեան գլուխ կանգնած մարդիկ քիչ թէ շատ պիտի գիտակցէին, որ ժողովրդի դէմ այդ ձեւով դուրս գալ չի կարելի, ու մի փոքր զիջող վերաբերմունք պիտի ցուցաբերէին, մանաւանդ այն բանից յետոյ, ինչ կատարեցին Փետրուարի 19-ին՝ համատարած լցոնումներ, ընտրակաշառք, բռնութիւններ... Նոյնիսկ բարոյական իրաւունք չունէին ժողովրդին մատով դիպչելու, որովհետեւ նրանք արել էին ամէն ինչ, որպէսզի ժողովուրդը դուրս գար Ազատութեան հրապարակ: Եւ վերջին հաշուով, ո՞վ ասաց, որ իրենց ամէն ինչ թոյլատրելի է, իսկ մենք մեր ձայնի իրաւունքը պաշտպանելու իրաւունք անգամ չունենք, ո՞վ ասաց, որ իրենք տէր են այս երկրում: Դա գուցէ իրենք են որոշել, բայց իրականում իրենք տէր չեն այս երկրում: Այն խուճապը, այն լկտի պահուածքը, որ իրենք ունեն այսօր եւ ժողովրդի, եւ քաղաքական ուժերի, եւ լրագրողների նկատմամբ՝ նրանց կողմից չի մարսուելու: Երկու անգամ արիւնով իշխանութիւն են պահել, եւ իրենց թւում է, որ երրորդ անգամ էլ են պահելու, դա նրանց չի յաջողուելու: Երկու արիւն մարսել են, երրորդը չեն մարսելու, մենք ազգ չենք լինի, եթէ թոյլ տանք, որ այս անգամ էլ մարսեն իրենց վերջին արարքները: Երկու մարդ, փաստօրէն, երկրում որոշում են ամէն ինչ, իսկ ո՞վ ասաց, որ իրենք այդքան իրաւունք ունեն, ո՞վ է իրենց այդ իրաւունքը տուել: Իրենք ժողովուրդ չունեն այլ եւս...ու՞մ են ղեկավարելու, ո՞ր երկրի վրայ են իշխելու, երբ չունեն ոչինչ, բացի իրենց կրիմինալ խմբից: Թող տղամարդ լինեն, որի մասին այդքան յիշեցնում են ու գլուխ են գովում եւ թող հանրաքուէ անցկացնեն: Իրենց գուցէ թւում է, որ տղամարդկութիւնը անզէն ժողովրդի դէմ դուրս գալն է: Տղամարդկութիւնն այն կը լինէր, եթէ նրանք գիտակցէին, որ իրենք զզուելի են այս ժողովրդի համար, որ ընդունելի չեն այս երկրի համար եւ իրենց վեչչերը հաւաքէին ու ռադ լինէին: Այ դա տղամարդկութիւն կը լինէր, իսկ այս դէպքում նրանք տղամարդ չեն, ընդամէնը ֆաշիստ են սեփական ժողովրդի գլխին: Մենք երբէք թոյլ չենք տայ, որ Հայաստանում հաստատուեն ֆաշիստական կարգեր, ինչքան ուզում են ձերբակալեն, բռնանան: Բանտարկեցի՞ն Շարժման լիդերներին, նոր լիդերներ են ի յայտ գալու, ժողովուրդը իրենցից չի վախենում: Դրանում այս իշխանութիւնները համոզուեցին Մարտի 1-ի լոյս 2-ի գիշերը, երբ փորձեցին բարոյապէս եւ ֆիզիքապէս ժողովրդին ջախջախել, սակայն ստացան հակառակ էֆեկտը: Ժողովուրդը վախի մթնոլորտից դուրս է եկել, մենք ստրուկ ազգ չենք, որ այդ ամէն ինչին դիմանանք, ժողովուրդն արթնացել է 10-ամեայ թմբիրից եւ այլեւս նրան քնեցնել հնարաւոր չէ:*

- Տիկ. Սարգսեան, ասում էք՝ ժողովրդին քնեցնել հնարաւոր չէ, գուցէ դրա՞ համար են այս օրերին տեղի ունենում ցուցարարների զանգուածային ձերբակալութիւնները, որպէսզի այլեւս ազատ մարդ չմնայ մեր երկրում եւ նորից չկազմակերպի եւ կամ չմասնակցի հանրահաւաքի:

*- Այդ ի՞նչ հիմքերով են մարդկանց ձերբակալում, այդ ի՞նչ բռնութիւններ են կիրառում նրանց նկատմամբ, եթէ նրանցից եւ ոչ մէկի մեղքը հաստատուած չի եւ չեն էլ կարողանալու հաստատել: Մեզանից ոչ մէկը կոչ չի արել բռնի ուժով իշխանափոխութիւն կատարել, մենք սահմանադրական ճանապարհով գնում էինք օրինական իշխանափոխութեան, որը իրականում տեղի էր ունեցել: Տէր-Պետրոսեանը ընտրութիւններում ստացել էր առնուազն 60-65 տոկոս ձայն, եւ իրենց թւում էր, որ դա պէտք է իրենց զիջէի՞նք: Դա ժողովրդի ընտրութիւնն է եղել, իսկ ռեժիմը պարտաւոր է հաշուի նստել իրողութեան հետ: Ջեն մարսելու... Այն յօդուածները, որոնք դրել են Շարժման մասնակից իմ ընկերների վրայ, չեն կարողանալու հաստատել, որովհետեւ նրանցից եւ ոչ մէկը երբէք բռնի իշխանափոխութեան կոչ չի արել: Ռեժիմն այսօր օրէնքից դուրս է, որովհետեւ Սահմանադրական դատարանը քանի դեռ իր որոշումը չէր կայացրել, նրանք իրաւունք չունէին որեւէ գործողութիւն կատարել: Մենք ընտրական պրոցեսի մէջ էինք դեռ եւ եթէ իրենց թւում է, թէ այն յերիւրանքը, որ իրենք այսօր թափում են եթերից, դա ժողովրդի համար ընդունելի է կամ դրան ժողովուրդը մի տոկոս հաւատում է, չարաչար սխալւում են: Ես հազարաւոր մարդիկ գիտեմ, որ հենց լուրերը սկսւում է, հեռուստացոյցն անջատում են, որպէսզի այն չջարդեն: Նորից եմ կրկնում, թող չմոռանան, որ Հայաստանը միայն հայաստանցիներով չի, սփիւռքում այնքան հայաստանցիներ ու այնքան հայեր կան, որոնք իրենց գործողութիւնները մինչեւ վերջ շարունակելու են եւ այն խուլ ականջներն ու կոյր աչքերը, որոնք առ այսօր փորձում են չտեսնել ու չլսել այն ամէնի մասին, ինչ կատարւում է Հայաստանում, վաղը լսելու եւ տեսնելու են, իսկ ժողովուրդն այլեւս տրամադրուած չի լռելու ու կուլ տալու այս ամէնը: Այնպէս որ, թող հետեւեն դէպքերի զարգացումներին:*

- Ձեր խօսքերից ենթադրե՞նք, որ արտակարգ դրութեան 20-օրեակից յետոյ Շարժումը նորից շարունակուելու է:

*- Միանշանակ, այս Շարժումն այլեւս կասեցնել հնարաւոր չէ, որովհետեւ սա Լեւոն Տէր-Պետրոսեանի հարցը չի, սա քաղաքական ուժերի հարցը չի, արդէն ժողովրդի եւ երկրի գոյատեւման, երկիրը նորմալ հունի մէջ դնելու խնդիրն է դրուած: Եթէ մի տեղ առանց կոչի ու հրաւէրի հրապարակ է դուրս գալիս կէս միլիոն մարդ, այն դէպքում, որ իրականում Հայաստանում միլիոն ու կէս ենք մնացել, դա նշանակում է, որ իրենք գործ ունեն համաժողովրդական շարժման հետ, որի դէմը ոչ մի ուժ չի կարող առնել: Քանի ուշ չի թող ուշքի գան ու հասկանան, որ իրենք կորցրել են ամէն ինչ: Երկու խօսք էլ օմբուդսմէն Արմէն Յարութիւնեանի մասին: Վերջապէս նա հասկացաւ, որ ինքը հայ է, հայաստանցի է եւ պէտք է մեր ժողովրդի շահերը պաշտպանի, իսկ պարոն Քոչարեանը ըմբոստացաւ դրա դէմ, թէ ինքը շատ մեծկադրային սխալ է թոյլ տուել: Երեւի երբ Քոչարեանն ասում է, թէ օմբուդսմէնը պէտք է ծառայի Հայաստանին, ինքն ի նկատի ունի, որ Հայաստանն ինքն է: Ուզում եմ նորից յիշեցնել՝ պարոն Քոչարեան, Հայաստանը դուք չէք, Հայաստանը մենք էք, նրանք, ում նկատմամբ դուք բռնի ուժ կիրառեցիք, այն մարդիկ են, որոնց դուք այսօր ձերբակալել էք, որովհետեւ այդ մարդիկ քաջութիւն են ունեցել ճշմարտութիւնը հրապարակաւ ասել: Երեւի երեկոյեան մէկ-մէկ նստէք ու մտորէք, որ Հայաստանը բացարձակ դուք չէք, աւելին՝ Հայաստանն ընդհանրապէս կապ չունի ձեզ հետ, Հայաստանը մենք ենք, ու մենք ենք այն պահելու:*



- Ասում էք առանց կոչի ժողովուրդը նորից դուրս է գալու եւ շարժումը շարունակուելու է: Իսկ ո՞վ կամ ովքե՞ր են առաջնորդելու վերսկսուած այդ շարժումը, առաջնորդների կարիք զգալու՞ է այն:

*- Նոյնիսկ եթէ մեր բոլոր ղեկավարներին ձերբակալեն, ժողովրդի միջից արդէն ծնւում են նոր լիդերներ, երիտասարդութիւնն այլեւս տրամադրուած չի համակերպուելու այս իրավիճակի հետ, իսկ մենք իսկապէս փայլուն երիտասարդներ ունենք, փայլուն սերունդ է աճում, որն ականատես եղաւ այս ամէնին: Նրանք աւելի ազատ են, քան մենք 1988 թուին էինք, այս անգամ հենց նրանք են ղեկավարելու այս շարժումը: Այնպէս որ, խորհուրդ կը տայի իշխանութիւններին նոր ձերբակալութիւններ չանել, որովհետեւ, այնուամենայնիւ մեզ փոխ արինողներ կը լինեն:*

- Տիկին Սարգսեան, Մարտի 21-ին, ըստ վերն ասուածի, պէտք է վերսկսուի ընդհատուած Շարժումը, որի նպատակը սահմանադրական ճանապարհով իշխանափոխութեան հասնելն է: Որք անո՞վ էք հաւանական համարում այն, որ ձեզ կը յաջողուի դե եուրէ նախագահի դարձած Սերժ Սարգսեանին հասցնել այն վիճակին, որ նա որոշի հրաժարական տալ:

*- Մենք այս ողջ ընթացքում միշտ օրինական ճանապարհով ենք ղեկավարել Շարժումն ու նոյն ոգով շարունակելու ենք նաեւ այսուհետ: Խորհուրդ եմ տալիս այս դէպքում ոչ թէ Քոչարեանին, այլ Սերժ Սարգսեանին սթափ լինել, որովհետեւ կարծես թէ նրա բանականութիւնն աւելի շատ է, քան Քոչարեանինը: Նրա մօտ աւելի շատ տղայական մօտեցում է այս հարցերի նկատմամբ, քան թէ պետական մտածողութեամբ մօտեցում: Մարդը որոշել է, որ ինքը տղայ է ու տղայական ճանապարհով պիտի գնա: Երկրի ղեկավարը տղայ չի, տղայ ջան, երկրի ղեկավարը պետական մտածողութեամբ մարդ պիտի լինի, որը 10 տարում Ռոբերտ Քոչարեանը ձեռք չբերեց եւ մնաց նոյն տղան: Սերժ Սարգսեանը, եթէ բանական էակ է, պիտի հասկանայ, որ արեան վրայ նախագահ չեն դառնում ու ինքը, միեւնոյնն է, լեգիտիմ չի լինելու: Իսկ եթէ լեգիտիմ չի, աշխարհի համար ընկալելի չի լինելու, ո՞նց է պատրաստւում ղեկավարել մի երկիր, որտեղից ինքը դուրս գալու հնարաւորութիւն չի ունենալու: Եթէ Սերժ Սարգսեանն իրօք այդպէս մտածի, պէտք է չեղեալ յայտարարի ընտրութիւններն ու նոր, քաղաքակիրթ երկրին յարիր ընտրութիւններ նշանակի:*

- Տիկին Սարգսեան, Ձեր նկատմամբ այս ընթացքում բռնութիւններ կամ այդ ձեռագրով որեւէ գործողութիւն կատարուե՞լ է:

*- Կոնկրետ իմ նկատմամբ՝ ոչ, որից ես շատ զարմացած եմ: Հաւանաբար նրանց ողջախոհութիւնն աշխատում է ու հասկանում են, որ եթէ ինձ ձերբակալեն, առնուազն 16 երկիր իրենց դէմ է դուրս գալու, 16 երկրում Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը ներկայացուած է ու մէկ զանգով կարող ենք ոտքի հանել ամբողջ հնչակեան կառոյցներն ու միանշանակ բոլոր երկրներում ակցիաներ կազմակերպել: Կարծում եմ, որ այդքան խելք ունեն ու դրա համար էլ ինձ չեն ձերբակալում:*


***ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ***
*ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝*
*ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ*
*Արեւմտեան Ամերիկայի Շրջանի*
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*
**MASSIS Weekly**
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

# ԼՈՒՐԵՐ

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՍԿԱՆԴԱՐԵԱՆ. «ՍՈՑԻԱԼԱՊԷՍ ԱԿՏԻՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՇՈԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ Է»

Կովկասեան լրատուամիջոցների ինստիտուտի տնօրէն Ալեքսանդր Իսկանդարեանի գնահատականով, Հայաստանում այժմ սոցիալապէս ակտիւ հասարակութիւնը շոկային վիճակի մէջ է, ինչին մեծապէս նպաստում է տեղեկատուական շրջափակումը: Առաջնային խնդիրը, ըստ քաղաքագէտի, այդ շոկից դուրս գալն է: Ալեքսանդր Իսկանդարեանի գնահատականով իշխանութեան վերջին օրերի յայտարարութիւններից զգացւում է, որ նրանք էլ գիտակցում են, որ «հասարակութեան մէջ կայ հսկայական ճեղք»:

«Հասարակութեան մէջ կայ դժգոհութեան մեծ հիմք, որ ոչ մի տեղ չի չքացել», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այսօր ասաց Իսկանդարեանը: - «Լեւոն Տէր-Պետրոսեանը կարողացաւ տալ հասարակութեանը իր սոցիալական դժգոհութիւնը արտայայտելու համար քաղաքական խողովակ: Նա միաւորեց հասարակութեան մէջ առկայ տարբեր տեսակի դժգոհութիւնները: Այս դժգոհութիւնը հասարակութեան մէջ ոչ մի տեղ չի չքացել: Ալիքի համար միլիոնաւոր մարդիկ պէտք չեն, այն մի քանի տասնեակ հազար մարդը, որ կարող են լարուածութեան մէջ պահել երկիրը, կան, եւ նրանք ծայրայեղականացուած են»:

«Ում ուզում ես ձերբակալիր, ում ուզում ես հեռացրու, ում հետ ուզում ես պայմանաւորուիր, ինչ կերպ ուզում ես կարգաւորիր իրավիճակը, բայց երբ ունես չոր խոտի մեծ դէզ՝ ինչ-որ մէկից լուցկին խլելով հարցը չես լուծում, դէզը միեւնոյն է մնում է», - նշեց քաղաքագէտը:

Ընդ որում, Ալեքսանդր Իսկանդարեանի գնահատականով, եթէ ընտրութիւններում յաղթէր Լեւոն Տէր-Պետրոսեանը, որոշ ժամանակ անց դժգոհութեան այդ նոյն պոտենցիալը դարձեալ ի յայտ էր գալու:

Եւ այստեղ խնդիրը, ըստ քաղաքագէտի, ոչ միայն այն է, թէ ինչպէս են անցել ընտրութիւնները. - «Խնդիրն այն, է որ անհրաժեշտ է, որ երկրում ձեւաւորուի քաղաքական միջավայր, որտեղ մարդիկ կարողանան իրենց դժգոհութիւնը եւ ցանկութիւնները արտայայտել»:

Հարցին, թէ պատրա՞ստ է արդեօք հասարակութեան այն հատուածը, որ մինչեւ Մարտի 1-ը Ազատութեան հրապարակում էր, վերադառնալ այնտեղ արտակարգ դրութեան աւարտից յետոյ, Իսկանդարեանը պատասխանեց, թէ «դրա պոտենցիալը կայ»:

Իրաւաբան Հրայր Թովմասեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ զուտ իրաւական տեսանկիւնից ի՞նչ է հնարաւոր ակնկալել արտակարգ դրութեան աւարտից յետոյ եւ արդեօ՞ք հանրահաւաքները կարող են շարունակուել, արձագանքեց. - «Արտակարգ դրութեան աւարտից յետոյ բոլոր սահմանափակումները, ըստ էութեան, վերանալու են: Ցանկացած նման սահմանափակում կը լինի մեր գործող օրէնքների խախտում»:

Վերլուծաբան Երուանդ Բոզոեանի կարծիքով՝ ներկայ պայմաններում ճնշումները հասարակութեան վրայ կարող են հանգեցնել նոր ցնցումների:

«Եթէ փորձ արուի հասարակութեանը ճնշել, միայն ճնշումներով փորձել լուծումներ գտնել, դա ոչ մի ապագայ չի ունենայ, եւ կարծում եմ, մենք ապագայում կը տեսնենք նոր ցնցումներ», - ասել է քաղաքագէտը «Ազատութիւն» ռադիոկայանին այսօր տուած հարցազրոյցում:

«Մի բան ինձ համար պարզ է, որ ըստ էութեան հասարակութեանը խաբել հնարաւոր չէ այսօր: Հասարակութիւնն աւելի ակտիւացած է, հասարակութիւնն արդէն պահանջում է լուրջ լուծումներ, եւ իշխանութիւնը տեսաւ դա», - փաստել է վերլուծաբանը:

## ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ ՈՒՂԵՐՁ ԵՆ ՅՂԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆԸ

Հայաստանի արտգործնախարարութեան պաշտօնանկ արուած աշխատակիցներ՝ մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան նախկին պետ Վլադիմիր Կարապետեանը, ՆԱՏՕ-ի բաժնի նախկին ղեկավար Մարթա Այվազեանը, ԱՄՆ-ի եւ Կանադայի բաժնի նախկին ղեկավար Կարինէ Աֆրիկեանը եւ Եւրոպայի վարչութեան նախկին խորհրդական Առաքել Սեմիրջեանը ուղերձով դիմել են ՄԱԿ-ի մարդու իրաւունքների հարցերով գերագոյն յանձնակատարին, ԵԱՀԿ-ի նախագահին, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի տնօրէնին, ԵԱՀԿ-ի դեսպաններին, Եւրոպայի խորհրդի գլխաւոր քարտուղարին, ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարին եւ Հայաստանում հաւատարմագրուած արտասահմանեան առաքելութիւններին:

Ուղերձը ստորագրած նախկին պաշտօնեաները ցաւակցութիւն են յայտնել Մարտի 1-ի ողբերգական իրադարձութիւնների ընթացքում զոհուածների ընտանիքներին: Միաժամանակ, նրանք վրդովմունք են յայտնել այդ արիւնալի իրադարձութիւնների առիթով, պնդելով, որ «դրանցից կը յաջողուէր խուսափել այն դէպքում, եթէ իշխանութիւնները չդիմէին բռնութեան»:

Ուղերձը ստորագրած ԱԳՆ-ի նախկին պաշտօնեաները շնորհակալութիւն են յայտնում ժողովրդավարական բոլոր հաստատութիւններին, որոնք արագ արձագանքել են երեւանեան իրադարձութիւններին:

«Մինչ Հայաստանի իշխանութիւնները փորձում են արդարացում գտնել զինուած ուժերի գործադրման եւ քաղաքական ձերբակալութիւնների համար եւ ընդդիմութեանը մեղադրում են իշխանութիւնը զաւթելու փորձի մէջ, այս զարգացումների իրական դրդապատճառ են հանդիսացել նախագահական ընտրութիւնների անցկացումն ու արդիւնքները, որոնք, ըստ BBC-ի հաղորդագրութեան, «լիովին համապատասխանում էին խորհրդային հին ստանդարտներին՝ ձայները գնուել են, ընտրողներին ահաբեկել են, հեռուստատեսութեան լուսաբանումը հաւասարակշռուած չի եղել», - ասուած է ուղերձում:

«Մենք համոզուած ենք, որ միայն ժողովրդավարական եւ արդար ճանապարհով ընտրուած նախագահը կարող է ներքին խաղաղութիւն եւ կայունութիւն ապահովել Հայաստանում եւ վերականգնել երկրի խաթարուած հեղինակութիւնը», - գրում են նախկին դիւանագէտները:

ԱԳՆ մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան նախկին պետ Վլադիմիր Կարապետեանը «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց, որ ակնկալում են միջազգային կառոյցների աջակցութիւնը.

«Փակ լրատուամիջոցների պայմաններում, ոչ ազատ դաշտի պայմաններում Հայաստանում հնարաւոր չէ իրականացնել նորմալ հետաքննութիւն եւ պարզել,իրականում ինչ է տեղի ունեցել: Մենք կոչ ենք անում միջազգային հանրութեանը ուշադրութիւն դարձնել կատարուածին եւ համապատասխան կառոյցների միջոցով հետաքննութիւն անցկացնել այդ իրադարձութիւնների առիթով»,-ասաց Վլադիմիր Կարապետեանը, յաւելելով, թէ՝ հաւատացած է, որ միջազգային կառոյցներն «ականջալուր կը լինեն իրենց կոչին»:

«Դրա վկայութիւնն այն է, որ իրադարձութիւններին հետեւել են տարբեր կազմակերպութիւնների բազմաթիւ արձագանքներ»:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱԿԱՆ ԴՐԵՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԼԵԳԻՏԻՄՈՒԹԵԱՆ ՏԱԿ»

*Շարունակուած էջ 1-էն*

թիւն, որի հետ ուզած-չուզած պէտք է հաշուի նստեն»:

Անդրադառնալով վերջին օրերու ձերբակալութիւններուն՝ Տէր-Պետրոսեան կարծիք յայտնեց. - «Ձերբակալութիւնները բացառապէս քաղաքական ռեպրեսիայի բնոյթ ունեն: Բախումների ոչ մի մասնակից չի ձերբակալուել: ՀՀՇ-ի վարչութեան 70 տոկոսն է ձերբակալուել, մի մասն էլ թաքնւում է: Իմ կենտրոնական շտաբի երեք անդամ է ձերբակալուել, երեքն էլ թաքնւում են: Ինչքան շատ են բանտարկելու, այնքան դժուարացնելու են իրենց գործը: Քաղբանտարկեալը հիմա շատ հազուագիւտ կատեգորիա է: Քաղբանտարկեալներ շատ քիչ երկրներում կան: Ես վստահ եմ, որ Ռոբերդ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանը այսօր շատ աւելի մտահոգ են, քան մեզանից իւրաքանչիւրը: Իրենք հասկանում են, թէ ինչ են արել. արիւն է թափուել, եւ նրանք այդ արեան պատասխանատուութիւնը զգում են»:

«Իշխանութիւնները անընդհատ խօսում են երկխօսութիւնից, բայց անում են ամէն ինչ, որպէսզի դա խափանեն: Մենք համաձայն ենք երկխօսութեան այն օրակարգով, որն առաջարկել է Եւրամիութիւնը: Ունենք չորս պայման՝ արտակարգ դրութեան վերացում, ձերբակալուածների ազատ արձակում, լրատուամիջոցների ազատութիւն եւ տեղի ունեցածի միջազգային անկախ հետաքննութիւն»:

Խօսելով իր կանխատեսումներու մասին՝ Լեւոն Տէր-Պետրոսեան խոստովանեցաւ. - «Ես կանխատեսում էի, որ Ռոբերդ Քոչարեանը գնացող նախագահ է, եւ նրան պէտք չէր սրանով աւարտել: Սերժ Սարգսեանը նոր նախագահ էր եւ չէր ուզենայ նման ձեւով սկսել: Համարէք, որ սխալուել եմ»:

Լեւոն Տէր-Պետրոսեան նաեւ կարծիք յայտնեց, որ արտակարգ դրութիւնը Երեւանի մէջ կը շարունակուի մինչեւ Ապրիլի 9-ը, երբ կը կայանայ Սերժ Սարգսեանի պաշտօնադրման արարողութիւնը:

## ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 1-էն*

ները ներկայացնել դեսպանին, սակայն ան մերժեց ընդունիլ ցոյցի ներկայացուցիչներուն:

«Մենք՝ որպէս Ամերիկայում բնակուող Հայեր, ցանկանում ենք, որ ԱՄՆ-ը օժանդակի որպէսզի դադարեցուի բռնապետութիւնը եւ չճանաչուեն կեղծուած ընտրութիւնների արդիւնքները»,- լրագրողներուն յայտարարեց ցոյցի կազմակերպիչներէն՝ իրաւաբան Կարօ Կարապետեան:

Յաջորդ օրը, Մայիս 11-ին Ընկ. Համբիկ Սարաֆեան ներկայացնելով Յանուն Ժողովրդավար Հայաստանի կազմակերպութիւնը եւ Ընկ. Սեւակ Խաչատուրեան ներկայացնելով Ս.Դ.Հ.Կ. Հայ Ամերիկեան Խորհուրդը, հանդիպում ունեցան Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղա-րութեան կովկասեան հարցերու գրասենեակի վարիչ Փոլ Ուոհլըրգի եւ քարտուղարութեան Հայաստանի բաժինի պատասխանատու Քրիսթիին Ռայթի հետ:

Հանդիպումի ընթացքին քննարկուեցան Ամերիկահայ համայնքը մտահոգող հարցերը՝ կապուած Հայաստանի մէջ գործադրուող բռնութիւններուն եւ քաղաքական հետապնդումներուն:

Երկու կողմերը համակարծիք էին, որ ժողովրդավարական գործընթացը, օրէնքի գերակայութիւնը եւ խօսքի ազատութիւնը պէտք է յարգուին Հայաստանի մէջ:

Պատուիրակները պահանջեցին, որ Ամերիկայի կառավարութիւնը մնայ հետեւողական եւ այս հարցը հետապնդէ, մինչեւ գործնական արդիւնքի հասնիլը:

Այս առթիւ Պետական Քարտուղարութեան յանձնուեցաւ աւելի քան 10 հազար ամերիկահայերու ստորագրութեամբ գրութիւն մը՝ արտակարգ դրութեան վերացման, քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման, հետապնդումներու կասեցման, մամուլի ազատութեան, հանրահաւաքներ կազմակերպելու իրաւունքին եւ նախագահական ընտրութիւնները չեղեալ յայտարարելու ու նոր ընտրութիւններ կատարելու պահանջով:

Պետական Քարտուղարութեան ներկայացուցիչները յայտնեցին, որ իրենց համար մեծ արժէք ունի Ամերիկահայ համայնքի կարծիքը եւ տեղեկացուցին որ Մարտ 1-ի դէպքերէն ասդին, ստացած են այս հարցերու շուրջ մտահոգութիւն յայտնող մեծ թիւով հեռախօսազանգեր եւ նամակներ:

Համայնքի ներկայացուցիչները նոյն նպատակով հանդիպումներ ունեցած են նաեւ Գոնկրէսի անդամներու եւ մարդկային իրաւանց կազմակերպութիւններու ներկայացու-ցիչներուն հետ:

# «ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅՄՍ». «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՁԵՌՔԻՑ ԳՆՈՒՄ Է»

*«Ժողովրդավարութիւնը, ինչի մասին հայերը երազել են տասնամեակներ շարունակ Մոսկուայի լծի տակ, ձեռքից գնում է», - գրում է «Նիւ Եորք Թայմս»-ը «Հայաստանի մութ օրերը» վերնագրուած խմբագրականում՝ ընդգծելով, թէ «շատ կարեւոր է կանգնեցնել աւտորիտարիզմին նման անցումը»:*

*«Այն բանից յետոյ, երբ ընդդիմադիրները վիճարկեցին նախորդ ամիս անցկացուած ընտրութիւնների արդիւնքները, իշխանութիւնները բիրտ միջոցի դիմեցին՝ մտցնելով արտակարգ դրութիւն: Առնուազն 8 մարդ է մահացել, անկախ լրատուամիջոցները լռեցուեցին, լռեցուեցին նաեւ բողոքի բոլոր ակցիաները», - գրում է թերթը՝ յաւելելով. - «Նախագահ Բուշը եւ արեւմտեան այլ ղեկավարներ պէտք է հասկացնեն Հայաստանի իշխանութիւններին, որ նման վարքագիծը անընդունելի է եւ վտանգում է հետագայ յարաբերութիւնները: Յետխորհրդային բռնապետութիւնների, ինչպէս, օրինակ, Բելառուսի եւ Ուզբեկստանի համեմատ՝ Հայաստանում, թերեւս, ամէն ինչ այնքան էլ վատ չէ: Ահա թէ ինչու է այդչափ կարեւոր կանգնեցնել աւտորիտարիզմին նման անցումը, քանի դեռ շատ ուշ չէ»:*

*Անդրադառնալով Մարտի 1-ի եւ Մարտի լոյսի 2-ի գիշերուայ բռնութիւններին ու բախումներին, «Նիւ Եորք Թայմս»-ի խմբագրականը նշում է. - «Ընտրութիւնների պաշտօնական արդիւնքները ազդարարեցին իշխող կուսակցութեան թեկնածու Սերժ Սարգսեանի յաղթանակը: Միջազգային դիտորդները յայտարարեցին, որ չնայած ընտրութիւնների ելքը արդար է թւում, ձայների հաշուարկի ժամանակ լուրջ խնդիրներ եղել են: Բողոքի ակցիաները վերածուեցին բռնութիւնների, երբ ոստիկանութիւնը սկսեց ծեծել ցուցարարներին: Ականատեսները մեր գործընկեր Սաբրինա Թավըրնիզին պատմել են, թէ իշխանութիւնները հրազէն եւ ռումբեր են դրել քնած ցուցարարների մօտ շաբաթ վաղ առաւօտեան: Այնուհետեւ, պնդելով, թէ նրանք յեղաշրջման փորձ են նախապատրաստել, ոստիկանները յարձակուել են ցուցարարների վրանային աւանի վրայ: Լիազօրութիւններն աւարտող նախագահը յաջորդ օրը տանկեր ուղարկեց փողոցներ, արգելեց հանրահաւաքները եւ հրահանգեց հայաստանեան լրատուական կազմակերպութիւններին հաղորդել միայն պաշտօնական տեղեկատուութիւն»:*

*«Տեղական ռադիոկայանները չեն կարողանում եթեր հեռարձակել օտարերկրեայ հեռարձակողների հայալեզու ծրագրերը՝ ներառեալ «Ամերիկայի ձայն» եւ «Ազատութիւն/Ազատ Եւրոպա» ռադիոկայանների հաղորդումները», - տեղեկացնում է թերթը: - «Դա յարուցեց այդ կայանները վերահսկող դաշնային անկախ գործակալութեան՝ Ամերիկեան հեռարձակումների տնօրէնների խորհրդի բողոքը, իսկ Պետդեպարտամենտը մտահոգութիւն յայտնեց մահուան դէպքերի կապակցութեամբ: Այդ բառերը կարող էին աւելի ծանրակշիռ լինել, եթէ Նախագահ Բուշը յաւելէր իր խօսքը: Հայաստանը, որը տեւական հակամարտութեան մէջ է հարեւան Ատրպէյճանի հետ, յարաբերականօրէն մեկուսացած է տարածաշրջանում եւ յատկապէս արժեւորում է Միացեալ Նահանգների հետ լաւ յարաբերութիւնները»:*

*Անդրադառնալով Հայաստանում ծաւալուող քաղաքական պայքարին՝ թերթի խմբագրականը ընդգծել է. - «Սա զուտ ժողովրդավարական առաքինութեան պայքար չէ՝ ընդդէմ զուտ աւտորիտար չարիքի: Ընդդիմութեան առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը, որը նաեւ երկրի նախկին նախագահն է, 1990-ականներին ռազմական տեխնիկա էր դուրս բերել փողոցներ, որպէսզի ճնշի իր օգտին արուած ընտրակեղծիքների դէմ բողոքի ակցիաները: Նա առանց համոզիչ փաստարկների պնդում է, որ յաղթել է այս ընտրութիւններում: Եւ հենց կառավարական ուժերը սանձազերծեցին անցած շաբաթավերջի բռնութիւնները, Տէր-Պետրոսեանի կողմից փողոց դուրս եկածներից ոմանց կարծես առաւել հետաքրքրում էր մօտակայ խանութների թալանը»:*

*«Հիմնական պատասխանատուութիւնը Հայաստանի կառավարութեան ղեկավարների վրայ է, եւ նրանց է, ում Սպիտակ տունը պէտք է հասցէագրի իր բողոքները», - ամփոփում է «Նիւ Եորք Թայմս»-ի խմբագրականը:*

# ՄԱՐՏ 1-Ի ՈՃԻՐՆԵՐՈՒՆ ԾԱԼՔԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*թէ ինչպէս են նոյն Լֆիկ Սամոյի խանութը թալանած մարդիկ հանգիստ այդ ապրանքը տանում ոստիկանների կողքով եւ ոեւէ ոստիկան չի միջամտում եւ չի փորձում կանգնեցնել թալանչիներին: Եւ բացի այն, որ մինչ, «Երեւան Սիթիի» իշխանական օպերացիան սոյն խանութի ապրանքի հիմնական մասը հանուած է եղել խանութից եւ տեղափոխուել է այլ վայր, նաեւ վկայութիւններ կան, որ մնացած ապրանքը, որ խանութից հանուել է օպերացիայից յետոյ, իրենց մեքենաներով տարուել է այլ վայր, ըստ ամենայնի, իրենց պահեստները, մի փոքր մասն էլ, Լֆիկի բաշիբոզուկները տարել լցրել են ոստիկանների մեքենաները, որ յետոյ հանրահաւաքի մասնակիցների վրայ գործ սարքեն»:*

*ԱԺ պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանին պատկանող «Երեւան Սիթի» խանութներու թալանի տեսագրութեան մէջ մարդիկ յստակ ճանչցած են, որ անոնք եղած են նոյն խանութի աշխատակիցները, որոնք երկաթէ ձողերը ձեռքերնին, աջ ու ձախ ջարդուփշուր կ'ընէին իրենց տիրոջ խանութը:*

*Այս թալանը եւ այլ կազմակերպուած դէպքերը օգտագործելով, ծպտուած յատուկ ջոկատներ սկսան կրակել անմեղ ժողովուրդի վրայ: Իսկ իշխանութիւնները, այս բոլորը պատրուակ ծառայեցնելով երկրէն ներս հաստատեցին արտակարգ դրութիւն եւ ամբողջական բռնատիրութիւն:*

*Այժմ հայաստանեան հեռատեսիլի ալիքները լծուած են ապատեղեկատուութեան լայն արշաւի, ժողովուրդը համոզելու համար թէ, դէպքերու պատասխանատուները Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցներն էին եւ որ, կրակ չէ բացուած ցուցարարներու վրայ:*

*Սակայն, արդէն ի յայտ եկան տուներու պատշգամներէն նկարահանուած վիտէօներ, որոնք յստակ ցոյց կու տան թէ, յատուկ ջոկատները ինչպէս կը կրակեն անմեղ ժողովուրդի վրայ: Այդ վիտէօները արտասահման փախցնելով արդէն իսկ զետեղուած են ինթըրնէթային «youtube.com» կայքէջին վրայ՝ արար աշխարհին ի տես:*

*Ներկայիս, ոչ միայն ժողովուրդի, այլ նաեւ իրաւապաշտպան կազմակերպութիւններու մօտ կան կասկածներ սպաննուածներու իսկական թիւի շուրջ:*

*Հայաստանի Հելսինքեան ընկերակցութեան նախագահ Միքայէլ Դանիէլեան կը յայտնէ որ, ըստ ականատեսներու Մարտ 1-ի գիշերը Գրիգոր Լուսաւորիչ փողոցի վրայ հանրահաւաքը ցրուելու ժամանակ օգտագործուած են դիպուկահարներ: «Ես կասկածներ ունեմ, որ իրականում սպաննուել են 8-ից աւելի մարդ»:*

*Դանիէլեան կը տեղեկացնէ որ, երեկոյեան ժամը 11-ի մօտ, ներքին զօրքերու ստորաբաժանումները յարձակած եւ ծեծի ենթարկած են մօտ 30 հոգինոց խումբ մը կանայք, որոնք կը գտնուէին Լուսաւորիչ եւ Լէօ փողոցներու խաչմերուկին եւ զինուորներուն կոչ կ'ընէին չենթարկուիլ իրենց հրամանատարներուն:*

*Միւս կողմէ, կը շարունակուին ընդդիմադիր գործիչներու շարքերէն ներս կատարուող ձերբակալութիւնները: Մարտ 10-ին Ազգային Անվտանգութեան Ծառայութեան կողմէ ձերբակալուած են Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի ղեկավար, նախկին արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Արզումանեանը եւ Հայոց Համազգային Շարժման (ՀՀՇ) վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեան:*

*Արզումանեանի եւ Զուրաբեանի փաստաբան Յովիկ Արսէնեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է, որ իր պաշտպանեալները ձերբակալուած են Քրէական օրէնսգրքի 300-րդ յօդուածով՝ «պետական իշխանութիւնը իւրացնելու» կասկածանքով: Այս նոյն յօդուածով ձերբակալուած են նաեւ շատ մը ընդդիմադիր այլ գործիչներ:*

*Վերջին օրերուն դատապարտումի եւ կամ ընդդիմադրութեան հետ երկխօսութեան կոչերով հանդէս եկան բազմաթիւ միջազգային շրջանակներ:*

*Առաջին անգամ ըլլալով երկխօսութեան կոչ ըրաւ նաեւ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Պուտին: Ան կարծիք յայտնեց, որ այդ կը բխի նաեւ ռուս-հայկական յարաբերութիւններու շահերէն:*

*Հայաստանի իշխանութիւններու գործողութիւնները դատապարտեց նաեւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի տեղակալի օգնական, ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահ Մեթիւ Պրայզա, որ վերջերս այցելեց Հայաստան եւ մօտէն ծանօթացաւ տիրող կացութեան:*

*Պրայզա խստօրէն դատապարտած է ընդդիմադիր ցուցարարներու նկատմամբ Հայաստանի իշխանութիւններու գործադրած բռնութիւնները:*

*Ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտը կառավարական ուժերու արարքները որակած է «կոպիտ եւ վայրագ»:*

# ՔՈՐԻ ՈՒԵԼԹ. «ՊԷՏՔ Է ԶՐԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐ» ԾՐԱԳՐՈՎ ՅԱՏԿԱՑՈՒՈՂ ՕԳՆՈՒԹԻՒՆԻՑ»

*Ջորջթաունի համալսարանի Եւրասիական Ռազմավարութեան ծրագրի ղեկավար Քորի Ուելթն առաջարկում է երեւանեան վերջին իրադարձութիւններից յետոյ զրկել Հայաստանը «Հազարամեակի մարտահրաւէր» ծրագրով յատկացուող օգնութիւնից:*

*«Հազարամեակի մարտահրաւէր» ծրագրով յատկացուող օժանդակութեան հոսքը պէտք է դադարեցուի՝ քանի դեռ չկայ Մարտի 1-ի եւ 2-ի բռնութիւնների ամբողջական եւ անկախ գնահատական», - կարծիք է յայտնել ամերիկացի մասնագէտը «Eurasia View» էլեկտրոնային թերթին տուած հարցազրոյցում:*

*«Միացեալ Նահանգները եւ եւրոպացիները պէտք է անեն մի բան՝ չյաւակնեն, որ ժողովրդավարական առաջընթաց կայ այնտեղ, որտեղ նման բան չկայ: Մի բան է փողոցին լաւատեսութեան աւիթ տալուց խուսափելը, մէկ այլ բան՝ բարձրաձայնել «մանկական քայլերի» մասին, երբ դրանք բացակայում են», - ասել է Քորի Ուելթը:*

*«Հայաստանի պարագայում անսովոր է այդ երկրի հետ սովորականի պէս գործ ունենալու ԱՄՆ-ի եւ Եւրոպայի ցանկութիւնն այն դէպքում, երբ գործ ունենալու հարց չկայ՝ Հայաստանը Արեւմուտքի համար ո՛չ անվտանգութեան, ո՛չ էլ էներգետիկ գործընկեր է», - փաստել է ամերիկացի փորձագէտը:*

# ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՈՐՈՇ ԿԱՅՔԷՋԵՐԻ ԱՆՀԱՍԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՒՈՐՈՒԱԾ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ

*Այս օրերին անհասանելի են մի շարք ինտերնետային կայքէջեր: «Վեբ» ընկերութեան ղեկավար Ալբերտ Տոնոեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հաստատեց, որ այդ կայքէջերի անմատչելիութիւնը իրօք նախատեսուած է:*

*«Դա արտակարգ իրավիճակով է պայմանաւորուած», - ասաց նա:*

*Հարցին, թէ արդեօ՞ք իրենց որեւէ ցանկ է նախապէս ներկայացուել, Տոնէեանը արձագանքեց. - «Կարող եմ ասել, որ որոշակի ցանկեր գոյութիւն ունեն»:*

*Կարող են արգելափակուել ոչ միայն հայաստանեան կայքէջերը, այլ նաեւ արգելել դրսում գրանցուած եւ գտնուող կայքէջերի մուտքը Հայաստան:*

*«Դա նոյնպէս ներսից կարելի է անել», - ասաց նա: - «Նպատակայարմարութիւնը մենք չենք որոշում: Արտակարգ իրավիճակների հետ կապուած որոշակի սահմանափակումներ կան այդ սայթերի, եւ մենք չենք որոշում՝ անկախ նրանից com-ով են, am-ով են...»:*

*Գրեթէ նոյն կերպ հարցերին պատասխանեց նաեւ «Արմինկօ» ընկերութեան ղեկավար Անդրանիկ Ալեքսանեանը:*

**ԱԶԳԱՅԻՆ**

# « ԶԵՆՔ ԸՆԿՐԿԻ ՈՐԵՒԷ ՈՒԺԻ ԱՌԱՋ» ԱՍՈՒՄ Է ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԸ

-Պարոն Փաշինեան դուք եղել էք մարտի մէկի առաւօտեան Երեւանի Ազատութեան հրապարակում նստացոյց անողների շարքում: Կարո՞ղ էք որպէս ականատես պատմել, թէ ինչ տեղի ունեցաւ այդ առաւօտ Ազատութեան հրապարակում:

*-Նախ եւ առաջ ես ուզում եմ ցաւակցութիւն յայտնել քոչարեանական վայրագ յարձակման բոլոր զոհերի հարազատներին ու մերձաւորներին եւ հաւաստել, որ նրանց յիշատակը մեզ պարտաւորեցնում է ազատուել քոչարեանասերժական բռնապետութիւնից:*

*Ինչ վերաբերում է ձեր հարցին, ապա «Ժողովներ, հանրահաւաքներ երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքը հրապարակային միջոցառումները դադարեցնելու յստակ հիմքեր է տալիս եւ սահմանում է յստակ ընթացակարգ: Ոստիկանութիւնը այդ ընթացակարգը խախտել է: Եթէ ոստիկանութիւնը մտադիր էր հարկադիր կերպով դադարեցնել հրապարակային միջոցառումը, պէտք է այդ մասին նախ տեղեակ պահէր կազմակերպիչներին եւ սահմանէր ողջամիտ ժամկէտ դադարեցնելու համար, որից յետոյ եթէ կազմակերպիչները չիրականացնէին այդ պահանջը պէտք է երկու անգամ բարձրախօսով յայտարարէր, որ ուժով դադարեցնելու որոշում է կայացուած: Պաշտօնական վարկածով ասւում է, որ ոստիկանութիւնը եկել էր վրաններում զննութիւն կատարելու: Նման բան չի եղել, տեղի է ունեցել հետեւեալը. մահակներով, էլեկտրաշոկերով զինուած սաղաւարտաւոր ոստիկանները շրջափակել են Ազատութեան հրապարակը, Հանրապետութեան առաջին նախագահը մօտեցել է բարձրախօսին, հանրահաւաքի մասնակիցներին յորդորել է ոչ մի կոնտակտ չհաստատել ոստիկանութեան հետ եւ ասել է, որ եթէ նրանք եկել են, ենթադրւում է, որ ասելու բան ունեն: Սակայն ոեւէ ոստիկան ոչ մի պահանջ չի ներկայացրել, այլ միանգամից սկսել են յարձակւում ցուցարարների վրայ՝ մահակներով, արցունքաբեր գազով, էլեկտրոշոկով: Եւ դա տեղի է ունեցել բացարձակապէս ապօրինի կերպով: Բայց ամենակարեւորն այն է, որ դրանից յետոյ էլ ոստիկանները հետապնդել են հեռացող մարդկանց: Իսկ արդէն յետոյ նրանք յարձակուել են այն մարդկանց խմբերի վրայ ովքեր չիմանալով, որ վաղ առաւօտեան ցրել են նստացոյցի մասնակիցներին, եկել են Ազատութեան հրապարակ հանրահաւաքին մասնակցելու: Հիւսիսային պողոտայում, Մաշտոցի պողոտայում եւ Հանրապետութեան հրապարակի մերձակայքում ոստիկանները յարձակուել են ենթադրուող ցուցարարների վրայ, այսինքն մարդկանց խմբերի վրայ եւ մահակներով նրանց ծեծի ենթարկել: Այսինքն ծեծը տեղի է ունեցել ոչ միայն Ազատութեան հրապարակում, այլեւ նրանից շատ հեռու՝ Մաշտոցի պողոտայում, Հիւսիսային պողոտայում, Ֆրանսիայի դեսպանատան մօտ: Եւ ըստ էութեան այս ապօրինի գործողութիւնները բերել են ընդվզման, եւ մարդիկ տեղեկանալով որ Ֆրանսիայի դեսպանատան մօտ կուտակուած է ցուցարարների որոշակի խումբ, որը ծեծի է ենթարկւում ոստիկանների կողմից, հաւաքուել են այդտեղ եւ ուղղակի փորձ են արել պաշտպանել իրենց արժանապատուութիւնը:*



-Իսկ ի՞նչ տեղի ունեցաւ մարտի մէկի երեկոյեան քաղաքապետարանի մերձակայ հրապարակում:

*-Այնտեղ տեղի ունեցաւ հետեւեալը. մարդիկ հասկացան որ գործ ունեն ոչ թէ օրէնքի շրջանակներում գործող ոստիկանութեան, այլ մի յանցաւոր զինուած խմբի հետ, որը որոշել է ֆիզիկապէս ոչնչացնել քաղաքացիներին: Արդէն կէսօրին լուրեր կային եւ այդ լուրերը հաստատուեցին, որ բանակ է մտնում Երեւան եւ որ զինուորներին բաժանւում է մարտական զէնք, այսինքն մարտական փամփուշտներով աւտոմատներ եւ այլն եւ այլն: Եւ, իմիջիայլոց, «Հայլուրը» մեզ շատ լաւ օգնում է, յայտարարւում է, թէ ցուցարարները զինուած են եղել, բայց կադրեր են ցոյց տալիս, թէ ինչպէս են երիտասարդները մօտակայքից խողովակներ պոկում պաշտպանուելու համար: Եթէ զինուած են եղել, ի՞նչ կարիք կար մօտակայ շինհրապարակներից խողովակներ պոկել, մանրացնել պաշտպանութեան համար:*

*Եւ աւելին, տեղի է ունեցել յանցագործութիւն. ցուցարարների վրայ դուրս է բերուել զինուած բանակ մարտական փամփուշտներով, աւտոմատներով, որոնք հետագայում ուղիղ նշանառութեամբ կրակել են ցուցարարների վրայ: Ու եթէ չլինէին մեր ձեռնարկած միջոցառումները այդ օրը հրապարակում մենք ունենալու էինք հազարաւոր զոհեր: Հիմա էլ այն փաստը, որ զինուորները ուղիղ նշանառութեամբ կրակել են մարդկանց վրայ, ստիպում է մտածել, որ զոհերի պաշտօնական թիւը, մեղմ ասած, չի համապատասխանում իրականութեանը: Իսկ ընդհանրապէս հարկ է արձանագրել, որ այդ օրը ժողովուրդը չընկրկեց բիրտ ուժի առաջ, խուճապահար չփախաւ եւ ես հպարտ եմ մեր ժողովրդի համար:*

*Կան նաեւ հաւաստի տեղեկութիւններ, որ ձկան խանութի կողմի մօտակայ շէնքերի տանիքներում եղել են դիպուկահարներ, որոնք ունեցել են յստակ յանձնարարական՝ չէզոքացնել հարթակում կանգնած մի քանի անձանց: Ուղղակի բարձրացած ծուխը եւ հարթակի խառնիճաղանչ վիճակը դիպուկահարներին հնարաւորութիւն չի տուել իրականացնել այդ յանձնարարութիւնը:*

*Այդ իրադարձութիւններով Մարտի մէկին ամբողջ աշխարհի համար ապացուցուեց այն ինչը մենք այսքան ժամանակ փորձում ենք ցոյց տալ՝ մենք գործ ունենք մարդասպանների իշխանութեան հետ: Այսօր հանրութիւնը ինքն իրեն պէտք է հարց տա՝ ի՞նչ գործ ունի ժամկէտային զինծառայութեան մեկնած զինուորը Երեւանի Գրիգոր Լուսաւորիչ պողոտայում աւտոմատներով եւ ժամանակակից զէնքով զինուած: Արդեօք նրանց ծնողները իրենց երեխաներին բանակ են ուղարկել, որպէսզի նրանք դուրս գան Երեւանի փողոցներ եւ կոտորեն իրենց համաքաղաքացիներին:*

-Վերջին օրերին շատ է խօսւում այն մասին, որ ցուցարարները Ֆրանսիայի դեսպանատան մօտից պէտք է գնային Մատենադարան: Ասւում է նաեւ որ դուք թոյլ չէք տուել դա անել:

*-Ֆրանսիայի դեսպանատան մերձակայ հրապարակից ժողովրդին հանելու ոստիկանութեան ձգտումը ունէր մէկ նպատակ. այդ հրապարակը բացարձակապէս յարմար չէր ժողովրդի դէմ ուժային գործողութիւններ իրականացնելու համար եւ մենք տեղեկութիւններ ունէինք, որ ոստիկանութեան ծրագիրը հետեւեալն էր՝ մարդիկ երթով պէտք է դուրս գային Մաշտոցի պողոտայ եւ ցուցարարների մէջ եղած պրովոկատորները պէտք է ջարդուփշուր անէին «Երեւան Սիթի» խանութի ապակիները, վարէին մի քանի մեքենաներ: Այդ ժամանակ ժողովուրդը կը լինէր Մաշտոցի պողոտայում, որը երկու կողմից բաց է, եւ շատ հեշտ կը լինէր նրանց խուճապի մատնելը, երկու կողմից ջրցան մեքենաներ եւ այլ տեխնիկա բանեցնելը: Իսկ հաշուի առնելով, որ բանակը արդէն Երեւանում էր եւ զինուած էր մարտական զէնքերով, ապա Մաշտոցի պողոտայում մարդիկ կը լինէին բացարձակապէս անպաշտպան: Երբ որ ես եկայ Ֆրանսիայի դեսպանատան մերձակայ հրապարակ, ես ունէի այդ ծրագրի մասին հաւաստի տեղեկութիւն, եւ հրապարակ գալուց յետոյ իմ առաջին խնդիրը հետեւեալն էր՝ ապահովել հանրահաւաքի մասնակիցների անվտանգութիւնը: Խնդիր, որն իմ կարծիքով լուծուեց՝ մինչեւ վերջ ոչ մի զինուոր չկարողացաւ ոտք դնել Ֆրանսիայի դեսպանատան մերձակայ հրապարակ եւ ոչ մի տեխնիկա՝ ոստիկանական կամ զինուորական, չմտաւ հրապարակ, ոչ թէ այն պատճառով որ չէին ուզում, այլ նման հնարաւորութիւն ուղղակի չունէին:*

-Քաղաքացիների մէջ վստահ լուրեր են պտտւում, որ այդ օրը բոլոր խժդժութիւնները սկսուել են էջմիածնից ժամանած ինչ-որ խմբի գործողութիւնների արդիւնքում:

*-Մենք հենց տեղում յայտարարել ենք, որ դատապարտում ենք խանութների նկատմամբ իրականացուող գործողութիւնները: Ակնյայտ է, որ դրանք կազմակերպուել են իշխանական սադրիչների կողմից: Մենք տասը օր անընդհատ Երեւանում կազմակերպել ենք հանրահաւաքներ, երթեր եւ բոլորը տեսել են, թէ ինչ է տեղի ունենում այդ հանրահաւաքների եւ երթերի ընթացքում, ոչ մի անկարգութիւն չի եղել եւ այս փաստերը ինքնին արդէն վկայում են իրենց մասին: Ակնյայտ է, որ այդ ամէնը կազմակերպուած է եղել Ռոբերդ Քոչարեանի եւ իշխանութիւնների կողմից, որպէսզի ինչ-որ կերպ արդարացուի արտակարգ դրութիւն մտցնելու մասին որոշումը: Մենք տեղում դատապարտել ենք կողոպուտի, խանութների ապակիները ջարդելու դէպքերը, ամէն ինչ արել ենք որ այդ դէպքերը տեղի*

*Շար.ը էջ 19*


***The Quality and Safe Choice for Your Child's High School Education***

AGBU HIGH SCHOOL – PASADENA

*OPEN ENROLLMENT FOR 2008-2009*

*Grades 9-12*

**The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.**

**Please call (626) 794-0363**

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԱՆԿԵԱԼ ԶԵԿՈՅՑԸ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 19-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների վերաբերեալ Եւրոպայում անվտանգութիւն եւ համագործակցութեան կազմակերպութեան ժողովրդավարական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) առաքելութեան նախնական զեկոյցում դիտորդները լաւուածութիւն եւ անհանգիստ վիճակ էին արձանագրել այցելած ընտրատեղամասերի աւելի քան 6 տոկոսում եւ «փոքրաթիւ բռնութեան դէպքեր»՝ չնայած «յարաբերականօրէն հանգիստ մթնոլորտին»:

Դրանից յետոյ միջազգային դիտորդական առաքելութիւնը տեղեկութիւններ է ստացել տարբեր աղբիւրներից տեղական դիտորդների, վստահուած անձանց, տեղամասային ընտրական յանձնաժողովների (ՏԸՀ) անդամների եւ որոշ լրագրողների նկատմամբ գործադրուած յարձակումների եւ ահաբեկումների մասին, յատկապէս Երեւանի որոշ համայնքներում:

Թիւ 1 ընտրատարածքային ընտրական յանձնաժողովում (ԸԸՀ), մասնաւորապէս, երկու դէպքում թեկնածուների վստահուած անձինք հնարաւոր ֆիզիկական պատժի մասին սպառնալիքներ են ստացել, թիւ 4 եւ 5 ԸԸՀ-ներում երեք թեկնածուների վստահուած անձինք ֆիզիկական յարձակման են ենթարկուել. երկու դէպքում՝ ընտրատեղամասում, մէկ դէպքում՝ յարակից տարածքում: Թիւ 4 ԸԸՀ-ում մի տեղական դիտորդ ֆիզիկական յարձակման է ենթարկուել եւ կորցրել է գիտակցութիւնը, իսկ 28 ԸԸՀ-ում ՏԸՀ-ի մի անդամ ընտրութիւնների օրը բռնի կերպով դուրս է բերուել յանձնաժողովից եւ այլեւս չի վերադարձել:

Դիտորդական առաքելութիւնը նաեւ ծանօթացել է ՏԸՀ-ների երկու անդամների, երեք վստահուած անձանց եւ մէկ քաղաքացու կողմից թիւ 28 ԸԸՀ-ին ներկայացուած դիմում-բողոքներին յիշեալ ընտրական յանձնաժողովից իրենց բռնի ուժով հեռացնելու մասին:

Ընտրութիւնների վերաբերեալ իր նախնական զեկոյցում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաքելութիւնը փաստել էր, որ իրենց այցելած 111 ընտրատեղամասերից 16 տոկոսում քուէների հաշուման գործընթացը որակուել էր որպէս «վատ» կամ «շատ վատ», գորօրինակ՝ 13/18, 13/30, 17/01 եւ 32/58 ընտրատեղամասերում: Մասնաւորապէս, 22/15 ընտրատեղամասում միջազգային դիտորդական առաքելութեան անդամները հաղորդել են, թէ ՏԸՀ-ի անդամների վրայ ճնշում է գործադրուել այլ թեկնածուների օգտին նշուած քուէաթերթիկներից աւելացնել Սերժ Սարգսեանի քուէներին: Թիւ 13/18 ընտրատեղամասում յանձնաժողովի նախագահը ցոյց չի տուել նշուած քուէաթերթիկները, ՏԸՀ-ի անդամները հաշուել են քուէները՝ գրիչները ձեռքներին, քուէաթերթիկները դրել են սխալ թեկնածուների տրցակների վրայ, եւ արձանագրութիւնները ստորագրուել են մինչեւ քուէների հաշուարկի աւարտը: 11/32 ընտրատեղամասում ՏԸՀ-ի անդամները ստորագրել են մաքուր արձանագրութիւն: 32/58 տեղամասում փորձեր են կատարուել խոչընդոտել դիտորդական առաքելութեան դիտորդներին՝ տեսնել քուէաթերթիկում կատարուած նշումները: Այդուամենայնիւ, դիտորդները նկատել են, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի օգտին քուէարկած թերթիկները հաշուարկուել են յօգուտ Սերժ Սարգսեանի: Երկու դէպքում քուէատուփերից դուրս են եկել «գգուշօրէն իրար վրայ դարսուած» ծրարների փաթեթներ, որոնք բոլորն էլ քուէարկուած էին յօգուտ Սերժ Սարգսեանի:

Քուէարկութեան օրուայ վերաբերեալ հետագայ վերլուծութիւնների ընթացքում միջազգային դիտորդական առաքելութեան որոշ անդամներ յայտնեցին, թէ ընտրատեղամասային յանձնաժողովների նախագահները մշտապէս հեռախօսազանգեր են ստացել արդիւնքները զեկուցելու խնդրանքով, յատկապէս պրն. Սարգսեանի քուէարկութեան տոկոսների վերաբերեալ (օրինակ, 25/04 տեղամասի յանձնաժողովի նախագահին վեց անգամ կանչել են՝ զեկուցելու արդիւնքների մասին):

Միջազգային դիտորդական առաքելութիւնը արդիւնքների ամփոփման գործընթացին հետեւել է բոլոր 41 ԸԸՀ-ում, ինչի վերաբերեալ լրացուել է դիտարկման 85 ձեւ: Դրանց մօտ 10 տոկոսում գործընթացը բացասական գնահատական է ստացել, 7 տոկոսում՝ թափանցիկութեան պակաս է արձանագրուել: Հաղորդուած բացթողումները ներառել են՝ որոշ ՏԸՀ-ներից չկնքուած փաթեթներով ստացուած քուէարկութեան նիւթերի դէպքեր, ՏԸՀ-ի արդիւնքների արձանագրութեան մէջ տուեալների ոչ համահունչ լինելը: Մասնաւորապէս, միջազգային դիտորդները գրանցել են, որ արձանագրութիւնների մէջ փոփոխութիւններ են կատարուել, երբ թուերը չեն համընկել (դիտարկումների 39 տոկոսը), ՏԸՀ-ները ԸԸՀ-ից հեռացել են ընտրական նիւթերով (օրինակ՝ թիւ 22/20 ընտրատեղամասի անդամները տարածքային ընտրական յանձնաժողով ժամանելուց յետոյ մօտ 4 ժամով անհետացել էին, իսկ երբ վերադարձել են՝ քուէարկութեան նիւթերն ակնյայտօրէն բացուել էին):

Որոշ դէպքերում, օրինակ, թիւ 37 ԸԸՀ-ում յանձնաժողովի նախագահը խոչընդոտել է, որպէսզի դիտորդները տեսնեն արձանագրութիւնները:

Որոշ դէպքերում դիտորդական առաքելութեան անդամները զեկուցել են արդիւնքների ամփոփման գործընթացի խախտումների մասին, օրինակ, թիւ 14 ԸԸՀ-ում Տէր-Պետրոսեանի վստահուած անձը վերահաշուարկ է ներկայացրել այն բանից յետոյ, երբ թիւ 14/32 ՏԸՀ-ի նախագահը ներկայացրել է ՏԸՀ-ի անդամների կողմից ստորագրուած 2 օրիգինալ դատարկ արձանագրութիւններ:

Միջանկեալ զեկոյցն արձանագրում է, որ ընտրութիւնների վերաբերեալ դիտորդների նախնական յայտարարութեան լուսաբանումը հեռուստատեսութեամբ հիմնականում ներկայացրել է փաստաթղթի դրական կէտերը եւ, ընդհանուր առմամբ, բաց թողել նշուած թերութիւններին վերաբերող մասերը: Չնայած գործընթացի անցկացման նկատմամբ հանրութեան մէջ եղած զգալի հակասութիւններին՝ հիմնական հեռարձակող լրատուամիջոցները՝ այդ թւում հանրային հեռուստատեսութիւնն ու ռադիօն, մեծ ծաւալով լուսաբանել են իշխանութիւնների տեսակէտները, սակայն հազուադէպ են հեռարձակել Փետրուարի 19-ի քուէարկութեան անցկացման վերաբերեալ մտահոգութիւններ ունեցող անձանց կարծիքները:

Անդրադառնալով քուէարկութեան վերահաշուարկի փուլին՝ միջազգային դիտորդական առաքելութիւնը փաստում է, որ, կենտրոնական ընտրական յանձնաժողովի (ԿԸՀ) համաձայն, վերահաշուարկի դիմումներ են ստացուել 25 ԸԸՀ-ում՝ 159 ՏԸՀ-ների արդիւնքների վերաբերեալ: Մնացած դիմումները ԸԸՀ-ները մերժել են այն հիմնաւորմամբ, թէ վերահաշուարկ պահանջելու վերջնաժամկէտն անցել է: ԸԸՀ-ները մերժել են 34 դիմում՝ դրանց «անհիմն» լինելու պատճառով: ԿԸՀ-ում գրանցուել են մի քանի բողոքներ, համաձայն որոնց ԸԸՀ-ները չեն գործել շարունակական հիմքերի վրայ մինչեւ Փետրուարի 20-ի ժամը 14.00-ը, այլ խօսքով՝ խոչընդոտել են վերահաշուարկի դիմումների ընդունման գործընթացին:

Օրինակ, ԿԸՀ բողոքներ են ստացուել թիւ 32 ԸԸՀ-ի վերաբերեալ, որը մերժել էր թիւ 32/30,32/20, 32/46 ՏԸՀ-ներում ձայների վերահաշուարկ կատարել՝ հիմնաւորելով, թէ ժամկէտը սպառուել է, մինչդեռ դիմումատուները հաստատում են, որ եղել են յանձնաժողովում ժամը 13:30-ին: Թիւ 8 ԸԸՀ-ի թիւ 8/6,8/16,8/17,8/21,8/23,8/24 ՏԸՀ-ներում նոյնպէս ԸԸՀ-ն մերժել է գրանցել վերահաշուարկի դիմումները, թէեւ դրանք ներկայացուել են մինչեւ գրանցման վերջնաժամկէտի աւարտը:

Թիւ 34/01,34/07,34/30 ՏԸՀ-ներում վերահաշուարկ չի կատարուել: Բողոք է ներկայացուել, որ թիւ 35 ԸԸՀ-ի նախագահը չի կատարել վերահաշուարկ՝պատճառաբանելով, թէ ՏԸՀ-ի հինգ անդամ են ներկայ, թէեւ քւորում ապահովելու իրաւական պահանջ գոյութիւն չունի:

Վերահաշուարկի այլ պահանջներ են մերժուել թիւ 3,21,23,24 եւ 38 ԸԸՀ-ում: ԿԸՀ-ն պատասխանել է, թէ նման բողոքները պէտք է

Շար.ը էջ 18




## ԱԶԳԱՅԻՆ

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԷՐԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է

*ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ*

*Մակեդոնիայի Էփիրոս երկրամասի Փիրրոս արքան արշաւանք մը գլխաւորեց Իտալիոյ վրայ: Մասամբ շնորհիւ իր բանակի մաս կազմող փիղերու պատճառած անակնկալին ու խառնաշփոթութեան, ան հռովմայեցիներու դէմ յաղթական դուրս եկաւ մեր թուարկութենէն առաջ 280-279-ին: Այս յաղթանակը ձեռք ձգելու համար, սակայն, իր բանակը մարդկային այնպիսի մեծ կորուստներ կրեց որ պատմաբանները մինչեւ այսօր «փիրրոսեան յաղթանակ» (phyrrhic victory) կ'որակեն՝ անարդարանալիօրէն ծանր մարդկային կորուստներու գինով տարուած սնամէջ կեղծ յաղթանակները:*

***

*Շատ հաւանաբար, «փիրրոսեան յաղթանակի» շատ մօտիկ հետեւողութեամբ, ժամանակակից հայոց պատմութիւնը «սերժեան յաղթանակ» հեգնական տխուր որակումով պիտի կնքէ 19 Փետրուար 2008-ի Հայաստանի նախագահական ընտրութիւններուն վարչապետ Սերժ Սարգսեանի կեղծ «յաղթանակը»: Իր կողմէ յաղթանակ նկատուած այս կոտոշաւոր խաբեբայութիւնը բեմադրելու համար Սերժ Սարգսեան ապօրինաբար օգտագործեց իր տրամադրութեան տակ գտնուող իշխանութեան բոլոր լծակներն ու միջոցները. կառավարական տարբեր կառոյցներու պաշտօնեաներուն ստիպեց (պաշտօնազրկումի սպառնալիքով) լծուիլ իր ընտրասայլին ու քուէարկել իրեն. միակողմանիօրէն լիուլի օգտագործեց զանգուածային լրատուութեան միջոցները եւ անոնց արգիլեց տեղ տալ ընդդիմութեան թեկնածուներուն. բանակի եւ ոստիկանութեան ուժերը շղթայազերծեց Ազատութեան հրապարակի խաղաղ ցուցարարներուն դէմ. սեւազգեստ դիմակաւոր զինեալ մարդասպաններու եւ քրէական յանցագործներու ոհմակները ղրկեց անզէն ժողովուրդը ահաբեկելու եւ կոտորելու համար:*

*Կարելի չէ այլ որակումով բնութագրել գեղծարարութեան, կաշառքի, ձերբակալութեան, բանտարկութեան, հայասպանութեան եւ հայրենաքանդումի աննախընթաց ոճիրները զորս 19 Փետրուարի նախագահական ընտրութիւններու նախօրեակին (անկէ շա՜տ առաջ՝ 27 Հոկտեմբեր 1999-ին Ազգային ժողովասրահի սպանութիւններէն սկսեալ), ընթացքին ու յետոյ, Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան գործեցին հայ ժողովուրդին դէմ: Անխնայ սառնասրտութեամբ, անոնք հայկական բանակն ու ոստիկանութիւնը թշնամացուցին Հայաստանի ժողովուրդին: Բրտօրէն ճզմեցին ժողովուրդի մեծամասնութիւնը համախմբող խաղաղ ցուցարարները՝ բռնի պարտադրելու համար Սերժ Սարգսեանի կեղծ, ստապատիր «յաղթանակը» որպէս հանրապետութեան ընտրեալ նախագահ:*

*Ասոր առընթեր տխուր, շատ տխուր մանրապատում մը մեզի կը հասնի ամենազօ՜ր իշխանութեան կեդրոնատեղիէն: Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ ծաւալուած համաժողովրդական ալիքը ճնշելու ուղիներու փնտռտուքին նուիրուած խորհրդակցութիւններէն մէկուն, կ'ըսուի թէ Ռոպերթ Քոչարեան յայտարարած է ուժային կառոյցներու ղեկավարներուն. «Էս երեւանցիք ի՞նչ են որ, մի հատ փը՛խկ անես, փախնելու են»: Եւ այդ փըխկը սուղ արժեց Հայաստանի ժողովուրդին՝ զինեալ ուժերու կողմէ Մարտ 1-ի անխնայ կոտորածով:*

*Իսկ Մարտ 6-ին կայացած կառավարութեան նիստին, ընդունելէ ետք թէ եղածը կանխել չկարողանալուն համար իրենք եւս մեղաւոր են, վարչապետ Սերժ Սարգսեան բարոյախօսա՜ծ է թէ «հասարակութեան մէջ չարութիւնը մեծացել է», եւ թէ «պէտք է վիճել, բացատրել՝ նոյնիսկ եթէ դիմացինդ չի հասկանում... ատելութիւնից կուրացած է»: Ժողովուրդ... չարութիւն... ատելութիւնից կուրացած...: Իրաւ որ ժողովուրդը քեզ չի հասկանում, ո՜վ Սուրբ Սերժ Սարգսեան:*

*Գիւղական կիսագրագէտ խոճայի կամ դաժան գիւղապետի յատուկ ինչպիսի՜ պնդագլուխ, յամառ ինքնագոհութիւն եւ կոյր արհամարհանք կայ այս «փըխկ»ին ու «մեծացած չարութեան» մէջ: Ինչպիսի՜ խոր տգիտութիւն եւ անարգանք՝ իր կողմէ մեթոտաբար շահագործուող, հարստահարուող, կեղեքուող եւ անգթօրէն սպանուող սեփական ժողովուրդին հանդէպ:*

*Շար.ը էջ 17*

# ՇՈՒԷԴԻԱՅԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԷԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*Մենք՝ հայրենիքից հազարաւոր կիլոմետրներ հեռու Շուէդիայում բնակուող հայորդիներս անձկութեամբ հետեւում ենք իր երկրում ազատ, արդար եւ արժանապատիւ ապրելու համար ոտքի ելած մեր հայրենակիցների հերոսական պայքարին:*

*Ձեր խաղաղ եւ օրինապահ կեցուածքը, եռանդը եւ միասնականութիւնը սակայն չկարողացաւ հանդուրժել կեղծիքների ու դաւադրութիւնների մէջ խեղդամահ եղող իշխանութիւնը, այն իշխանութիւնը որ այսօր ցաւօք գործադրում է նոյն մեթոդներն ու միջոցը ինչ գործադրել է թշնամին Սումգայիթում, Բաքւում եւ այլուր:*

Այժմ այս ակնարկի երկրորդ բաժնին մասին, որ «շփոթ» նկարագրեցինք: Հանրապետականներու հակադրուող տեմոքրաթ կուսակցութիւնը լուրջ վերիվայրումներու եւ անորոշութեան մատնուած է ներկայիս: Երբ քանի շաբաթներ առաջ, սեւ թեկնածու Պարաք Օպամա գրեթէ ապահոված կը թուէր իր կուսակցութեան թեկնածութիւնը, Super Tuesday» - Մարտ 5-ի ընտրութիւնները եկան անգամ մը եւս թղթերը խառնելու, Հիլըրիի յաղթանակով, Թեքսասի, Օհայոյի եւ Ռոտ Այլընտի մէջ: Հիլըրիի եւ Օպամայի նեցուկ պատգամաւորներու տարբերութիւնը շուրջ 100 թիւ է, եւ երկուքն ալ անհաւանական կը թուի որ ապահովեն պահանջուած 2025 թիւը: Խա՞ղ թէ իսկական

Շար.ը էջ 15



**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance
  by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans
  by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation
  by Employers Compensation Insurance Company

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

BlueCross of California
The Power of Blue.℠

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

**ԱԶԳԱՅԻՆ**

# ԵԿԵՂԵՑԻ-ԺՈՂՈՎՈՒՐԴ-ՊԵՏՈՒԹԻՒՆ. ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱՆՀԱՂՈՐԴ ՄԻՄԵԱՆՑ

*«ԱՐԱՔՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԹԵՀՐԱՆ*

*Մշտապէս խուսափել եմ գրել այս նիւթի մասին, ուրիշներին էլ խորհուրդ եմ տուել չափազանց զգոյշ եւ կշռադատ լինել, որովհետեւ հոգեւոր աշխարհին, եկեղեցուն շատ մօտ եմ կանգնած, եւ իւրաքանչիւր խօսք՝ասուած եկեղեցուն, եկեղեցականին, անձնական վիրաւորանքի աստիճան ցաւագին եմ ընդունել: Բայց այս անգամ լռելը համազօր է նաեւ ինքնադաւաճանութեան եւ հետեւաբար՝ պարսաւանքի, ուստի որոշեցի լռութիւնս խախտել:*

*Անհագստութեանս մասին գրելու դրդապատճառ դարձաւ միջազգային լրատուամիջոցներով սփռուած այն տեղեկութիւնը, ըստ որի Հռոմի կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Բենեդիկտոս 16րդը ստիպուած է եղել հրաժարուել Հռոմի Սափյենցի համալսարանում նախապէս նշանակուած դասախօսութիւնը կարդալուց: Որոշումը պայմանաւորուած է եղել համալսարանի ուսանողների եւ դասախօսերնեի ճնշմամբ, որոնք սպառնացել են Պապին դիմաւորել բողոքի գործողութիւններով: Պատճառը եղել է 18 տարի առաջ՝ 1990 թ. կարդինալ Յոզեֆ Պատցինգերի (Բենեդիկտոս 16րդի եպիսկոպոսական անունն է) քարոզներից մէկում հնչեցրած այն միտքը, որտեղ վերջինս «արդար եւ հիմնաւոր» է անուանել կաթոլիկ եկեղեցու կայացրած վճիռը Գալիլէոյ Գալիլէյին ինկվիզիցիայի ենթարկելու մասին: Այժմ աշխարհում երեք վայր կայ, ուր քահանայապետը չի կարող այցելել՝ Մոսկուա, Փէքին եւ մեր համալսարանը, - բացականչում էին ուսանողները՝ ձեռքներին պարզած մեծ պաստառով՝ «Եթէ Բենեդիկտոսը չգայ Սափյենց, Սափյենցը կը գնա նրա մօտ» վերտառութեամբ:*

*Փաստն ինքնին բացառիկ է: Միայն այն հանգամանքը, որ 21րդ դարում Գալիլէոյ Գալիլէյի կեանքը, գործունէութիւնը եւ ցաւալի վախճանը մնում է քաղաքակիրթ մարդկութեան, ի մասնաւորի՝ երիտասարդ ուսանողների ուշադրութեան կենտրոնում՝ արժանի է գովեստի եւ գնահատանքի: Կաթոլիկ ուսանողների նախաձեռնութեանն առաւել սկսեցի նախանձել, երբ կրկին դառնութեամբ յիշեցի Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի Ամանորի Հայրապետական ուղերձը հայ ժողովրդին, երբ այս դժնդակ ժամանակներում, հոգեւոր խօսքի, Քրիստոս Յիսուսի օրհնութեան անհագ ծարաւ ունեցող հայ ժողովրդին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամանորի ուղերձում խօսք է գնում նաեւ առաջիկայ նախագահական ընտրութիւնների մասին՝ ուղղակի կամ անուղղակի իշխանական թեկնածուի յիշատակմամբ եւ քարոզչութեամբ: Ինձ համար առաւել անհասկանալի է, թէ ինչպէս է բարձրաստիճան եկեղեցականը՝ Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Նաւասարդ Արքեպս. Կճոյեանը, մասնակցում, Երրորդ «ռեյխի» պաշտօնամուտին նմանուող Հայաստանի Հանրապետական կուսակցութեան համագումարին, եւ հանդէս գալիս իշխանութեան թեկնածուին պաշտպանող ամպագոռգոռ ուղերձով, ու յաջորդ պահին իսկ կարգալոյծ չի արւում Վեհափառ Հայրապետի յատուկ կարգադրութեամբ: Ինձ համար անընդունելի ու անընկալելի է, որ սոցիալական ծանր վիճակում գտնուող ու անասելիօրէն անպաշտպան, իրաւազուրկ, անարգուած, կեղեքուած ու հարստահարուած մեր ժողովրդի հոծ զանգուածները, Հայ եկեղեցու եւ եկեղեցականի համար մնում են անտեսանելի, իսկ ժողովրդի ցաւը՝ չընկալուած ու չլսուած:*

*1980-ականների վերջից սկիզբ առած Հայ եկեղեցու հոգեւոր վերազարթօնքը ուղիղ համեմատական էր համաժողովրդական ազգային վերազարթօնքին: 1988ի համաժողովրդական շարժումը Հայ եկեղեցու համար բացառիկ հնարաւորութիւն էր՝ ինքնադրսեւորուելու եւ վերագտնելու իր կորցրած երբեմնի դերը հայ ժողովրդի կեանքում:*

*Բայց անցան տարիներ, եւ քսան տարի անց, եկեղեցու անգործութիւնը, թուլութիւնը, երկրում աղանդաւորական շարժումների եւ քրիստոնէական եւ ոչ քրիստոնէական հարանուանութիւնների աճն ու բարգաւաճումը պատճառաբանւում է նոյն հիմնաւորմամբ՝ խորհրդային ժամանակներն իրենցն են արել, եւ եկեղեցին չի կարողանում թօթափուել «սովետական» բեռից՝ իրական հոգեւոր առաքելութեան փոխարէն դառնալով պարզ, ոչինչ չասող ծիսավայր ու ժողովրդի իրական հոգեւոր կարիքներին, ցաւերին ու պէտքերին անհաղորդ:*

*1988ի հոգեւոր վերածնունդը, սակայն, չսահմանափակուեց եկեղեցական բաղադրիչով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը աշխարհում Հայ Առաքելական եկեղեցու էմիածնապատկան եկեղեցիների համընդհանուր քաղաքականութեան մշակն է, գործնականում տարիների ընթացքում դարձաւ Հայաստանի իշխանութիւնների կցորդը: Այդ համարումն ուղիղ արտայայտում էր սեփական ժողովրդի հանդէպ եկեղեցու դրսեւորած վերաբերմունքը: Ինքը՝ եկեղեցին, իրեն այլ դերում այդպէս էլ չպատկերացրեց: Խորհրդային հասարակարգի փլուզումից յետոյ միայն, մի քանի տարի շարունակ, հայ եկեղեցին օժտուեց լիակատար անկախութեամբ, ինչը պէտք է խոստովանել ամբողջութեամբ չիրացուեց եւ չօգտագործուեց: Վազգէն Ա. Հայրապետի վախճանումից յետոյ, Հայաստանի Առաջին Նախագահը, յանուն հայ եկեղեցու միասնութեան 1994-1995 թ. որոշեց առաջին անգամ միջամտել եկեղեցու ներքին կեանքին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին առաջարկելով ընտրել որպէս Ամենայն Հայոց Հայրապետ՝ յոյս տածելով, որ այդպիսով հնարաւոր է մեղմել 1950-ականների սկզբից Հ.Յ. Դաշնակցութեան ղեկավարութեան տակ անցած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի յարաբերութիւնները՝ վերջնահաշւում նշմարելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան՝ ամբողջապէս Ամենայն Հայոց Կաթողիկոսութենա ենթակայութեան տակ անցնելու հեռանկարը: Ըստ վերլուծաբանների Առաջին Նախագահի նախաձեռնութիւնը վիժեցուեց բացառապէս Հայաստանի իշխանութիւնների եւ ՀՅԴ անբարենպաստ յարաբերութիւնների պատճառով: Եթէ այդպէս է, ապա անհասկանալի է, թէ ինչպէս արդէն եօթ տարի շարունակ, Հ.Յ. Դաշնակցութեան Հայաստանի իշխանութեան մէջ ներկայացուած լինելով հանդերձ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ յարաբերութիւնները չեն անցնում «բարեկամական» նամակագրութիւնից այն կողմ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. 2001 թ. Սեպտեմբերից ի վեր Հայաստան չի այցելել եւ երկու կաթողիկոսութիւնների միջեւ շփումները գործնականում գրօյացուել են:*

*Վերջին ինը տարիներին, Ամենայն Հայոց Գարեգին Ա. Հայրապետի վաղահաս մահից եւ 1999 թ. Հոկտեմբեր 27ին կայացած կաթողիկոսական ընտրութիւններում Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարքի ընտրութիւնից անմիջապէս յետոյ, երկրում ծայր առած բազմաթիւ ճգնաժամերին հայ եկեղեցականն այդպէս էլ անհաղորդ մնաց:*

*Այն վերաբերմունքը, որ վերջին տասը տարիներին ՀՀ իշխանութիւնները դրսեւորել են հայ եկեղեցու հանդէպ՝ Մայր Աթոռին, առնուազն, պէտք է ստիպէր չէզոքութիւն դրսեւորել իշխանութեան նկատմամբ: Հոգեւոր կեանքին եւ Հայ եկեղեցու դաւանանքին ու հայ հաւատացեալի կենսակերպին խորթ իշխանութեան պարագլուխների ագդատեաց քաղաքականութիւնը հայ եկեղեցականին առաւելապէս պէտք է մօտեցնէր հոգեւորի սննդի անյագ կարիք զգացող ժողովրդին: Բայց այդպէս չեղաւ: Իշխանութիւնները որոշեցին իրենց աստուածամերձ կերպը լրացնել ՀՀ Սահմանադրութեան մէջ ամրագրուած Հայ Առաքելական Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին յատկացուած առանձնաշնորհեալ կարգավիճակի յիշատակմամբ, որն ուղղակիօրէն հարուածում է եկեղեցու եւ պետութեան բաժանման կարեւորագոյն սկզբունքին: Հայ եկեղեցու այսօրուայ ընդունած դիրքը երկրում ծայր առած գործընթացների նկատմամբ նոր երեւոյթ չէ: Այսպիսի գործելաոճի արմատները պէտք է փնտռել 1940-ական թուականներում: 1943 թ. «Ժողովուրդների հայր» Ստալինը հրաւիրեց Կրեմլ եւ ազատութեան մէջ մնացած մի քանի ռուս եպիսկոպոսների հետ մի համաձայնագիր ստորագրեց, որ մինչ օրս մնում է որպէս թէ հայ եւ թէ ռուս եկեղեցիների համար հիմնական ուղեցոյց: Այդ համաձայնագրով եկեղեցու առաջնորդները պարտաւորւում էին երբեւէ չքննադատել համայնավար կառավարութեան քաղաքականութիւնը, անհրաժեշտութեան դէպքում լինել նրանց կողքին, գովերգել նրանց, միւս բոլոր դէպքերում դրսեւորել արտակարգ չէզոքութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս այսօր վարւում է մեր եկեղեցին:*

*Բարձրաստիճան եկեղեցականների այսօրուայ գործելաոճը, ցաւօք, այս համաձայնագրով նախատեսուած դրոյթներից այն կողմ չի անցնում: Բայց մի բան առաւել արտառոց է, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կարող է Ամենայն Հայոց Հայրապետը շահագրգիռ լինել այս քրէածին եւ աստուածամերժ իշխանութեան վերարտադրութեամբ, աւելին՝ մասնակցել Սերժ Սարգսեանի նախընտրական քարոզչութեան համար կազմակերպուած հոգեւոր-եկեղեցական միջոցառումներին:*

*Հայ ժողովրդի կեանքում եկեղեցու բացառիկ դերը պայմանաւորուած է եղել պետականութեան բացակայութեան պայմաններում վերջինիս՝ ժողովրդի առջեւ կանգնած մարտահրաւէրներին նոյնական վերաբերմունքով: Դարեր շարունակ ժողովրդի պատերազմը եղել է եկեղեցու պատերազմը, ժողովրդի ցաւը եղել է եկեղեցու ցաւը, ժողովրդի խնդիրները եղել են եկեղեցունը եւ այս համատեքստում այսօր բոլորովին անհասկանալի է, թէ ինչպէս է արձագանգքում եկեղեցին ժողովրդի ձայնին, որքան անհաղորդ ու անտարբեր է շարունակում մնալ ժողովրդի հանդէպ համատարած աղաղակող կեղեքումներին եւ ստորացումներին:*

*Խաւարի ու լոյսի միջեւ առաջիկայ համազգային պայքարը պիտի դառնայ նաեւ եկեղեցու պայքարը, որովհետեւ ժողովրդավարութիւնը, մարդու հիմնարար ազատութիւնները, ազատ խօսքը, ազատ կամ արտայայտութեան իրաւունքը համընդհանուր Քրիստոնէական արժէքներ են եւ մղուող պայքարն էլ պայքար է յանուն նոր արժէքների ու համակարգի հաստատման, յանուն քրիստոնէական սիրոյ, յանուն վաղուայ, յանուն ապագայի:*

*Լոյսի համար պայքարը պարտուելու հաւանականութիւն չունի, իրաւունք չունի, որովհետեւ լոյսն արդէն մեր մտքերում է, նրա յաղթանակը՝ կայացած:*


**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն**

**Ի նպաստ**

**Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին**

Մեծ Պարգեւ՝ **2008 Lexus ES 350**

Ա. Պարգեւ՝ **Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան**

Բ. Պարգեւ՝ **Laptop Համակարգիչ**

Գ. Պարգեւ՝ **42” Plasma TV**

**Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ**

**Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. ժամը 8:00ին**

**Verdugo Hills Country Club**

**400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202**

**Նոր Հաճընի Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով**

**Նուէր՝ $100**

**Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝**

**(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029**

# ԳՐԱԿԱՆ

## Ստացուած Հրատարակութիւններ
## ՄԵՍՐՈՊԱՎԷՊ
## ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ
## Պատմերգ (2007)




*Սկսեալ Եգիպտոսէն մինչեւ Լիբանան, Գանատա եւ ԱՄՆ՝ 1938-ի երիտասարդական տարիներէն մինչեւ 2007, իր յառաջացեալ տարիքը, Ժագ Յակոբեան միշտ կանգնած կը մնայ տեղ-ծագործական պատնէշի վրայ, մերթ մերթ ի լոյս աշխարհ բերելով, տակաւ մէկն միւսը գերազանցող բոցաշունչ տաղեր, որոնք կը յագեցնեն ընթերցողին քերթողական պապակը:*

*Ներկայ «Մեսրոպավէպ» քերթուածներու ժողովածուն, Ժագ Յակոբեանի 45-րդ երկը՝ հրատարակութիւնն է ԱՄՆ Ազգային Առաջնորդարանի, աջակցութեամբ Տիկնանց Օժանդակ Մարմնի, լոյս տեսած է 2007-ին, Փասատենա (ԱՄՆ), Հայ Լեզուի Տարուան Առիթով: Մաքուր, խնամուած եւ գեղարուեստական դասաւորումներով ներկայացուած ներկայ 126 էջերու վրայ տարածուած քերթողագիրքը, որպէս նախաբան կ՚ընդգրկէ «Հայ Լեզուի Տարի, 2007, Արամ Ա. Կաթողիկոսի Պատգամը» եւ Մուշեղ Արք.ի ողջոյնի գիրը: Երկը կը բաղկանայ չորս գլուխներէ.*

*Ա. Հրաշադար, (14 քերթուած), Բ. Երբ կը գրեմ հայերէն (36), Գ. Ծաղկաքաղ, (19) Դ. Հայ գիրքը՝ պատգամախօս (Արձակ պատ-գամներ:)*

*«Մեսրոպավէպ» բանաստեղծութիւններու այս գեղարուեստականօրէն իր լրումին յանգած երկը, վաւերական պատմերգութիւնն է Ժագ Յակոբեանի: Անոր յուզական, պատկերաւոր, յախուռն, ջերմ ու նախանձախնդիր իմաստուն գրչին տակ կը փառաբանուի Մեր Մայրենի Լեզուին: Բանաստեղծը անոր կը հագցնէ ոգեղինականացած, ներգործող, յայտնապէս կառուցողական պատմուճան, որուն մշտատեւ, բծախնդիր խնամքն ու անաղարտ պահպանումը՝ երաշխիք կը դառնի ան, հայ լեզուին պահպանման եւ անով՝ հայ ժողովուրդի յաւերժացման, ինքնարժեւորման, լինելիութեան եւ ազգային երազներու նուիրագործման: Արդարեւ, լիցքաւորող, ներշնչող եւ նպատակադրող երկ մը՝ որ կը հարստացնէ մեր մշակութային գանձատունը:*

## ԲԻՒՐԵՂԱՑՈՒՄ ԵՒ ՇՓՈԹ

*Շարունակուած էջ 13-էն*

*յաղթանակ, Հիլըրի կը թուի հաւանական ձախողութենէն կը հանէ հաւանական յաջողութեան, եւ նոյնիսկ կը թուի տեմոքրաթ կուսակցութեան թեկնածուն դառնալ: Միւս կողմէ, Պարաք Օպամա, որ անխոցելի կը թուէր քանի մը շաբաթներ առաջ, լուրջ թուացող սայթաքումներու ենթարկուեցաւ Ռըզքօ ճանչցուած գործարարի մը հետ վիճելի գործակցութեամբ, եւ «Nafa» ճանչցուած ծրագրի գծով, Գանատայի հետ Ամերիկայի փոխ-յարաբերութեան հարցով: Այնպէս որ Օպաման «կորսնցուց» Մարտ 5-ի ընտրութեանց ընթացքին, եւ իր գլխաւոր թեկնածու դառնալու հաւանականութիւնը տկարացաւ:*

*Ի՞նչ կը մտածեն տեմոքրաթները ներկայիս: Հիլըրին կը հպարտանայ 35 տարիներու իր փորձառութեամբ եւ իր յարձակողական ընտրական ոճով, Պուշի իշխանութեան եւ անոր քաղաքականութեան վերաբերեալ: Օպաման, թէեւ իտէալիստ, պերճախօս եւ ապագայի փոփոխութեան համակիր թեկնածու, որ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ երիտասարդներու, իր ցեղակիցներու, եւ տնտեսապէս ապահով շրջանակներու մօտ, տակաւին յստակօրէն չէ բանաձեւած իր տեսակէտները թէ ներքին եւ թէ արտաքին մարզերէն ներս: Այնպէս որ, յստակ թեկնածութեան մը բացակայութեան, տեմոքրաթները պիտի ապաւինին «super» ճանչցուած եւ նշանակովի ընտրուած թեկնածուներու (delegates) որոնք, տագնապի պարագային, պիտի կրնան նշանակել կուսակցութեան թեկնածուն: Հոս եւս, Օպաման ունի մեծամասնութիւն մը որ կրնայ սակայն իր դիրքը փոխել: Իբրեւ լուրջ դժուարութիւն, տակաւին կայ Ֆլորիտայի եւ Միչիկընի թեկնածուներու «պատժուած» ըլլալու պարագան, որ կուսակցութեան ղեկավարութեան կողմէ կախակայուեցան, ժամանակէն առաջ ընտրութիւն կատարած ըլլալու համար:*

*Ահաւասիկ այսպիսին է ամերիկեան ընտրական օրէնքը, իր խճողուած, բարդ, ծախսալից եւ անակնկալներով լեցուն վերիվայրումներով: Մէկ կողմէ, բիւրեղացում, իսկ միւս կողմէ շփոթ...*

**ԲԱՑՈՒԱԾ Է**
**Հիպնոսաբուժութեան կեդրոն**
**ղեկավարութեամբ՝**
**Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի**
**Փասատինայի մէջ**
**Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն**
**մինչեւ կ.ե. ժամը 3:00**
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**
**Pasadena CA 91104**
**Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ**

## ՍՓԻՒՌՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
## ՕՏԱՐ ՇԵՄԻՆ
## ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Հինգ տարեկան մանչուկս այսօր՝
Թարգմանչացի Օրն արփաւոր,
Բայց ինձ համար՝
Սուգի նման օր մը տխուր,
- Սրտիս՝ մռմո՛ւռ,
Հինգ տարեկան հայկակս այսօր
Ձեռքէն բռնած՝ դպրոց տարի,
Օտար դպրոց: Եւ օտարի
Ձեռքին դրի
Հայու անուշ, հայու աղուոր,
Ձեռքը անոր, սիրտը խնձոր:

Հայ արիւնով ու հայ լեզուով
Մանչուկս իմին
Ձեռքովն իսկ իմ
Տարի, դրի դպրոց մը խորթ
Եւ յանձնեցի զայն օտարի
Մը անծանօթ:
Արցունքն՝ աչքիս, արցունքն՝ հոգւոյս,
Զայն ձգեցի սեմին անլոյս
Ու ելայ դուրս:

Ան՝ ներս մտաւ օտար դռնէն
Եղնիկօրէն,
Չգիտնալով, որ այդ ուղին
Չէ՞ր տաներ իմ Արարատին:
Ու սլացքով ծիծառներէն՝
Ան ներս ցատքեց խորթ պարտէզէն,
Որուն վարդերն, - ա՜խ, չէ՜ր գիտեր, -
Իր Մասիսին փուշն անգամ չէր.

Մինչ ետեւէն, ես ցայգօրէն
Կը նայէի իր հասակի
Հասկին կանաչ,
Որ կը շիջէր օտար մութին,
Դառնալու շուք մը անճանաչ՝
Դռնէն անդին...
Եւ ձայն տուի՝ իրե՜ն ծարաւ,
Ծարա՛ւ որպէս ովասիսի
Ու Մայիսի.
Եւ ձայնիս մէջ, հայ հօր մը՝ ցա՛ւ,
Ու կար կարօ՜տը Մասիսի:

Ան չլսե՛ց... Խառնուեցաւ
Խորթ ամբոխին մէջ ժխորուն:
Ու չքացա՜ն սիրաթաթաւ
Կանչս հայրական ու հայ լեզուն՝
Ձայներուն մէջ օտարական:
Եւ իմ տղաս, սրտէ՛ս ծաղկած,
Ինձմէ գնա՜ց:
Իր գարնան հետ գարունս առած՝
Ետին ձգեց
Միայն ձմեռ ու վէրք ու հեծ:

Ես, հա՛յր մը հայ, որ բնաւին
Չ՚ուզեր մեռնիլն իր հայ զաւկին,
Այսպէս սակայն զարկի՛ սիրտէն
Ու հեռացայ
Շեմէն ամայ ու անիմայ,
Ես՝ իբրեւ հայր
Ամօթահար՝
Որպէս ծախա՜ծ ես ըլլայի
Անգին զաւակս առանց գինի՝
Հեռուներու անորոշին,
Ու ծախէի իմ իսկ հոգին
Գորշ մշուշին...

Եւ տուն դարձայ ես միս-մինակ
Ու գլխահակ ու անզաւակ,
Թախիծ մը թաց՝
Սիրտիս փակչած,
Կարծես վաղուան հայ մը թաղած՝
Աչքը դեռ բա՛ց,
Մտածելով իմ մութ »բախտ«իս,
Բախտի՜ս հայու, բախտի՜ս հովու,
Որ հայ սիրտէս փրցուց որդիս,
Եւ զիս նետեց եւ թողուց զիս
Ցուրտ մայթերու
Վրայ պանդուխտ՝ հեռու, հեռու...

. 2 .

Կը մտածեմ իր հա՜յ հոգւոյն...
Ու կը տեսնեմ
Որդեկարօտ ցաւիս մէջէն՝
Թորգոմի թոռ տղաս հիմա
Բազմութեան մէջ օտար տղոց,
Փողոց ինկած որբի նման
Այնչափ մինակ, այնչափ ամայ,
Ուղեկորոյս գառնուկի պէս
Այնքան շփոթ, այնքա՜ն շուար,
Տղաս, զոր ես ձեռքովս չար
Տարի, դրի դպրոց օտար,
Թարգմանչացի Օրը բոսոր,
Բայց ինձ համար
Սուգի պէս մութ ու սեւաւո՛ր:

Եւ կու տամ հարց
Հրաբորբոք ցաւիս դիմաց.
- Ա՜հ, ի՞նչ ըլլայ պիտի, Աստուած,
Իր հայ հոգին, իր հայ հոգին՝
Մէջն անարեւ այդ ձմեռուան
Եւ գիշերուան այդ անլուսին,
Որ աշխարհն է ցուրտ օտարին:
Ո՜րչափ մինակ պիտի զգայ
Անհունին մէջ օտարութեան,
Ո՜րչափ տրտում՝
Աշունին մէջ անհայութեան
Եւ ձիւնին մէջ անհայրութեան...

Ու անտեղեա՛կ
Այն սուրբ ցաւին, որ ցա՜ւն է հայ,
Ան՝ լա՜յ պիտի
Առաջին լացն իր պանդուխտի,
Ա՛ն, հինգ տարու մանչուկս իմին,
Որուն ձեռքէն բռնած՝ տարի,
Վա՛յ ինձ, տարի օտա՛ր դպրոց,
Թարգմանչացի Օրը հայոց:

Եւ պատկերէն այս՝ խելագար,
Կու լամ արցունքն անմխիթար
Եւ սուգն անյոյս՝
Իմ պապերուն հայրենական,
Որ վառեցան, որ մարեցան՝
Մեր դարերուն, մեր թոռներուն
Բաշխելու լոյս
Եւ հայութիւն...

**Հայ Թելեժամը Կը Վերադառնայ**
**18ը Ալիքի Վրայ**
**Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը**
**Շաբաթը 7 օր անվճար**
**Հարկ չկայ բաժանորդագրուելու – 40 Ցաւելեալ ալիքներ**
**Ցաւելեալ տեղեկութիւններու համար դիմել**
**Հայկական Թելեժամ (818) 982-2400**

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԱԼԻԾ ԵՒ ԱՐԵՆԻ ԱՂՊԱՊԵԱՆՆԵՐԸ

Շ. եւ Է. Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը, հաւատարիմ վարժարանին ծառայելու իր գեղեցիկ աւանդութեան, անգամ մը եւս ծրագրած է հաճելի եւ օգտաշատ ճաշկերոյթ մը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Ապրիլ 5, 2008ին, առաւօտեան ժամը 11:00ին Wilshire Country Club-ի շքեղ շրջաբակէն ներս 30 N. Rossmore Ave., Los Angeles, CA 90004:



Ներկաներու նուրբ ճաշակը գոհացնելու միտումով, ձեռնարկին հրաւիրուած են գաղութիս ծանօթ եւ սիրուած արուեստագիտուհիները Ալիծ եւ Արենի Աղպապեանները:

Տիկ. Ալիծ Աղպապեան որպէս մասնագէտ հեքիաթասաց ունկնդիրներու կը ներկայացնէ հայկական աւանդական սովորութիւններ, դիցաբանութիւն, երգ եւ անոնց պատմական հոլովոյթն ու արմատները: Հեղինակն է բազմաթիւ մանկական գիրքերու եւ դասաւանդած է Մերտինեան Վարժարանի մէջ: Տիկ. Աղպապեան վերջերս վերադարձաւ Սթոքհոլմէն ուր հրաւիրուած էր Սթոքհոլմի Հանրային Գրադարանի Վարչութեան կողմէ ներկայացնելու հայկական մանկական գրականութիւնը Մանկական Միջազգային Գրքի շաբթուան ընթացքին:

Ալիծ Աղպապեանի կ՚ընկերանայ իր դուստրը՝ Արենին որ մանագիտացած է ժամանակակից երաժշտութեան մէջ եւ վերջերս ստացաւ իր Մագիստրոսի տիտղոսը (MFA) CalArts համալսարանէն: Արենին՝ Յունուարին ելոյթ ունեցաւ Համազգայինի Mosaic II երգահանդէսին որ տեղի ունեցաւ Կլէնտէյլի Ալեքս Թատերասրահին մէջ: Ներկայիս ան կը ղեկավարէ Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ երիտասարդաց միացեալ երգչախումբը: Սոյն ձեռնարկին Աղպապեաններու ներկայացման թեման է «Հայ Կինը Աւանդութեան եւ Դիցաբանութեան մէջ»: Ներկաները վստահաբար պիտի վայելեն հաճելի եւ օգտաշատ պահեր:

Եկէք վայելելու այս գեղեցիկ պատեհութիւնը, ձեր մասնակցութիւնը բերելով՝ նաեւ պիտի սատարէք Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանի վերելքին:

Ձեր տեղերը ապահովելու համար կը խնդրուի հեռաձայնել հետեւեալներուն մինչեւ Մարտ, 29, 2008:

Տիկ. Մէյրի Աթիքեան՝ (818) 788-3255

Տիկ. Հերմինէ Ֆէրմանեան՝ (323) 467-6896

Տիկնանց Օժանդակ Մարմինը կը սատարէ վարժարանի կրթական ծրագիրներուն եւ նպաստներ կը հայթայթէ կարօտեալ աշակերտներուն: Մերտինեան վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Համալսարաններու Արեւմտեան Ընկերակցութեան կողմէ - Western Association of Schoools and Colleges (WASC):


**MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.**

**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**



Join Our New Music School in Pasadena
By Experineced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels
Professional Digital Recording studio
for all your audio recording needs

**1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104**
**Phones: (626) 797-8867 & (818) 599-1606**
**and**
**334 N. Central Avenue Unit 202**
**Glendale, CA 91203**
**Phones: (818) 244-8244 & (818) 599-1606**
**Visit us at: www.musiclessons4u.com**


# ՀՐԵՇՏԱԿ ՄԸ ԵՂԻՐ, ԿԵԱՆՔ ՄԸ ՓՐԿԷ

Հայաստան-Սփիւռք աշխարհատարածքի վրայ տակաւ կազմակերպուող համահայկական Ոսկրածուծի Նուիրատուներու Արձանագրութեան Հիմնարկը (ՀՈՆԱՀ), Հինգ. 5 Մարտ 2008, ժամը 8.00էն սկսեալ՝ կլէնտէյլի ֆէնիսիա ճաշարանին մէջ կազմակերպեց ընդունելութիւն մը (kick-of reception): Ներկայ կը գտնուէր գաղութիս մամլոյ խմբագիրներէ, հեռուստատեսիլի խօսնակներէ, եկեղեցական եւ բարեսիրական կազմակերպութիւններու ներկայացուցիչներէ բաղկացած ընտրանի հասարակութիւն մը:

Օրուան հիւրընկալ, Համահայկական Ոսկրածուծի Նուիրատուներու Արձանագրութեան Հիմնարկ»ի անունով ելոյթներ ունեցան Պրն. Արթին Մանուկեան եւ համանուն հիմնարկի հիմնադիր Նախագահուհի՝ Տոքթ. Ֆրիտա Ժորտան, որոնք մանրամասն տեղեկութիւններ հայթայթեցին դեռեւս 1999-ին հիմնուած համանուն հիմնարկի «Հրեշտակ մը եղիր, կեանք մը փրկէ» նշանաբանի ներքոյ նախաձեռնուած մարտահրաւէրներուն առընթեր:

Մեկնելով այն իրողութենէն, որ հայութիւնը եւս, այլ ազգային փոքրամասնութիւններու շարքին ունի իր ծինային իւրայատուկ կազմութիւնը, ուստի, մահացու հիւանդութիւններու (քաղցկեղի, շաքարախտի, սրտի) պարագային կարիքն ունի իր ոսկրածուծին համապատասխանող հակածիններու պատուաստումին: Հաստատուած է, որ Միջազգային մակարդակի վրայ փաստօրէն խիստ դժուար եղած է գտնել հայերուն համապատասխանող փոխ-պատուաստ, ինչ որ պատճառ դարձած է այդ հակածիններու պատուաստումի կարօտ մեր հիւանդներէն շատերուն եղերական մահուան:

Հիմնարկը, իրեն կեդրոն պիտի ունենայ Երեւանը, ուր պիտի կառուցուի Յողունային Բջիջներու Պատուաստումի Կեդրոնը, իրեն օժանդակ մասնաճիւղեր ունենալով մեր գաղթօճախները, աշխարհի չորս տարածքին: Հայազգի ոսկրածուծի նուիրատուներու թիւը 14.000-ի կը հասնի այսօր: Պէտքը կը զգացուի այդ թիւին բազմապատկումին: Նաեւ, ծրագրուած ու պատրաստ է Հիմնարկի՝ Երեւանի Յողունային Բջիջներու Պատուաստումի Կեդրոնի քարտէսը:

Արդարեւ, մեծ է նիւթական կարիքը:

Այս պէտքերը կարենալ հոգալու համար, ՀՈՆԱՀ-ը կազմակերպած է իր առաջին թելեթոնը «Հրեշտակ մը եղիր, կեանք մը փրկէ» նշանաբանի տակ, որ տեղի պիտի ունենայ Կիրակի Ապրիլ 13,2008-ի երեկոյեան ժամը 4:00-8:00 «Հորիզոն»ի եւ այլ կայաններու պատկերասփիւռի վրայ:

Խմբագրութեանս կոչն է զօրավիգ կանգնիլ ՀՈՆԱՀ-ի հայանպաստ մարտահրաւէրներուն, որոնց գերազանցապէս մարդասիրական բարիքները պիտի տարածուին բուժման կարօտ հիւանդագին հայորդիներու վրայ, աշխարհով մէկ սփռուած:





ԱՄԵՆՈՒՐԵՔ ՄԱՆՐԷՆԵՐ ԿԱՆ
ԼՈՒԱՑԷՔ ՁԵՐ ՁԵՌՔԵՐԸ

This project was supported by Grant/Cooperative Agreement Number U90/CCU917012-06 from CDC. Its contents are solely the responsibility of the authors and do not necessarily represent the official views of CDC.

Public Health

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԷՐԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է

*Շարունակուած էջ 7-էն*

*Նախագահական թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ համախմբուած ընդդիմութիւնը, իր մեծամասնութեամբ, հաստուածական հրամայականի մը չէ որ կ'ընդառաջէր: Ան կը հետապնդէր ազգային-հասարակական իր տարրական իրաւունքները որոնք անորակելի կարճատեսութեամբ ու սինիզմով ոտնակոխ եղան վերջին տասը տարիներուն՝ քոչարեանական-սերժեան անարգ իշխանութեան բռնատիրական կրունկին տակ:*

*Օրինական միայն մէ'կ ելք կը մնար համաժողովրդային ընդդիմութեան մը որուն առջեւ խափանուած էին Սահմանադրութեամբ երաշխաւորուած բոլոր այլ ուղիները: Ատիկա՝ հանրային ժողովրդային իրաւունքներու արտայայտման եւ իշխանութիւններու գործած անհաշիւ անիրաւութիւններու — ոճիրներո'ւ — դէմ բողոքարկման խաղաղ հանրահաւաքներու եւ երթերու կազմակերպումն էր: Ուրիշ ելք առարկայականօրէն անգոյ է քաղաքական իշխանութեան մը տակ որ կ'անտեսէ, կը բռնաբարէ ու կ'ոտնակոխէ ժողովուրդի տարրական իրաւունքները: Ինչ անունով ալ կոչենք զայն — աւազակապետութիւն, գաւառապետութիւն կամ գիւղապետութիւն — բնոյթը նոյնն է ըստ էութեան: Այսինքն գործ ունինք պետութեան մը հետ որ հիմնուած է՝ վարչապետի կամ նախագահի պատմուճան հագած գիւղապետի անառարկելիութեան, սնափառութեան, վրիժառութեան եւ անկուշտ հարստացման «իրաւունքի» չա'տ վիճելի վարկածին վրայ, որ կ'երաշխաւորուի ճորտերու եւ ստրուկներու ամբողջական հնազանդութեամբ:*

*Բացարձակապէս խաղաղ այլ ելք չի մնար նախնադարեան անճոռնի իրաւակարգի մը տակ որ արտասովոր իրաւասութիւններ կը շռայլէ հանրապետութեան նախագահին ու վարչապետին, կ'ուժաթափէ եւ անկարող ներքիններու վիճակին կ'իջեցնէ խորհրդարանի անդամները, իշխանութեան հլու կամակատար խամաճիկի կը վերածէ դատական ամբողջ համակարգը — ներառեալ Սահմանադրական Դատարանը — եւ պետութեան անզօր սպասարկուի վիճակին կը հաւասարեցնէ զանգուածային լրատուութեան միջոցները:*

*Ահա թէ ինչո'ւ խաղաղ հանրահաւաքներու եւ երթերու դիմեց ընդդիմութիւնը, մինչեւ վերջ օրինակելի կարգապահութեամբ մերժելով զինեալ ապստամբութեան այլընտրանքը՝ առաջքն առնելու համար ներազգային արիւնահեղութեան:*

*Քոչարեան-Սերժ Սարգսեան երկգլխանի բռնատիրական համակարգը, սակայն, աննախատեսելի սառնասրտութեամբ, ի'նքը անցաւ խաղաղ ժողովուրդի դէմ անհարկի ջարդարարութեան եւ արիւնահեղութեան՝ վատաբար օգտուելով համաժողովրդական ընդդիմութեան անզէն եւ անպաշտպան վիճակէն: Այս առնչութեամբ իշխանութիւններու հնարած պատրուակներն ու պատճառաբանութիւնները զուրկ են որեւէ իրական եւ իրաւական հիմքէ: Անոնք պարզապէս կը միտին ուշադրութիւնը շեղել իրենց ահաւոր ոճիրէն, որոնց նմանը չենք գտներ հայոց պատմութեան մէջ — որքան ալ կարգ մը իշխանամէտ «մասնագէտներ» փորձեն բանգիտութեամբ պատմական բաղդատելի օրինակներ յարմարեցնել՝ օգնելու համար որ իրենց գիշերային քունէն չզրկուին ամենավերին իշխանական աթոռներու վրայ բազմած ոճրագործները:*

*Նման պայմաններու տակ արտակարգ իրավիճակի հռչակումը, անոր հետեւանքով նոր հանրահաւաքներու արգիլման կողքին, առաւել եւս կը բարդացնէ ընդդիմադիր զանգուածային լրատուութեան արդէն վտիտ միջոցներու տագնապը — միջոցներ որոնք ոչ միայն ամիսներ, այլ տարիներ ամբողջ գլացուած են ընդդիմութեան, եւ որոնց մենաշնորհը վերապահուած է իշխանութեան նախագահական թեկնածուին:*

*Տիրող անշնչելի մթնոլորտին մէջ երազատեսութիւն է խօսիլ արդիւնաւէտ երկխօսութեան եւ իրարհասկացողութեան մասին: Հայանուն նորագոյն բռնակալներու կողմէ պետական վարչամեքենայի բոլոր լծակներու եւ միջոցներու կեդրոնացումը, ինչպէս այդ եղաւ ընտրութեան նախօրեակին եւ ընթացքին ու հիմա, անհաւասար պայմաններու տակ կը տեղադրէ քաղաքական լուծումի մը համար առաջադրուող կարելի որեւէ երկխօսութիւն: Արդիւնաւէտ երկխօսութեան նուազագոյն նախապայմաններն են՝ վերջ տալ արտակարգ իրավիճակին, ազատ արձակել բոլոր ձերբակալուածները, ապահովել տեղեկատուութեան հաւասար հնարաւորութիւնները, ամբողջացնել Մարտ 1-ի իրադարձութիւններու միջազգային անկախ հետաքննութիւնը, եւ հաւասար պայմաններու տակ երկխօսութիւնն սկսիլ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ:*

*Իսկական լուծումը, սակայն, կ'ենթադրէ նախագահական զեղծուած ընտրութիւններու անվաւեր ու չեղեալ հռչակումը, ներկայ կառավարութեան հրաժարումը, չէզոք նոր եւ ազդեցիկ կառավարութեան մը կազմութիւնը, եւ նախագահական արդար նոր ընտրութիւններու ձեռնարկումը իսկապէս ազատ պայմաններու տակ:*

***

*Պարոնայք Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան, դուք ձեր ոճրային ու քանդիչ վարմունքով շատ ծանր, թերեւս անդարմանելի հարուած հասցուցիք հայ ժողովուրդի միասնութեան, ապահովութեան ու գոյատեւումին: Հարցական դարձուցիք Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը որպէս անկախ պետութիւն: Խոշոր սեպ մը խրեցիք Հայաստանի եւ Արցախի եղբայրական մէ'կ եւ նոյն ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ, որմէ վէրքի պէս բացուած ճեղքէն պատրաստ են ներխուժել մեր թշնամիները: Ժողովուրդին վրայ թքելէ եւ զինք խաբելէ ետք, դուք նոր ոճիրներու դիմեցիք՝ ծածկելու համար 27 Հոկտեմբեր 1999-ի ոճիրը հայրենի պետականութեան դէմ: Որպէս ժողովրդավար նոր եւ յուսալի երկիր, Հայաստանի վարկը ցեխին մէջ թաթխեցիք եւ զայն իջեցուցիք բռնակալական յոռեգոյն պետութիւններու մակարդակին: Ժողովուրդին գաղտնի եւ ժողովուրդէն համար ճակատագրական նշանակութեամբ բանակցութիւններ վարեցիք եւ (շատ հաւանաբար) Հայաստանի ամբողջ գոյութիւնը վտանգող համաձայնութիւններ կնքեցիք թշնամիին հետ: Ամենէն լաւատես պարագային, բազմաթիւ տարիներու կը կարօտի ձեր գործած ոճիրներու հետեւանքներուն վերացումը: Կը յուսանք ու կը հաւատանք թէ, հակառակ ձեր հայրենաքանդ ոճիրներուն, անխորտակելի պիտի մնայ հոգիի, միտքի եւ ճակատագրի միասնութիւնը որ արցախեան ազատամարտի թէժ օրերուն կոփուեցաւ՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի անձնազոհ դիւցազուններու անբիծ արեամբ նուիրագործուած: Հայ ժողովուրդի արդար ընդվզումն ու ցասումը ուղղուած է անձնապէս ձեր երկուքի եւ ձեր անմիջական գործակիցներու ոճրային արարքներուն, եւ որեւէ կերպով չի վերաբերիր այդ անքակտելի միասնութեան որ մեր բոլորի գոյատեւման գերագոյն երաշխիքն է:*

*Վերջին յիշեցում մը եւս, ամենայն յարգանքով ուղղուած՝ ընդդիմութեան համաժողովրդական նախագահական թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանին: Աւելի քան տասնըվեց տարիներ առաջ անկախութիւնը Հայաստանի ժողովուրդին հրամցուեցաւ ափսէի վրայ՝ Սովետ Միութեան փլուզումին հետեւանքով: Ասիկա որոշ չափով իշխանութիւններուն համար հեշտացուց ժողովուրդի հոգեկան ստրկացումը եւ ազատութիւններու զգալի սահմանափակումը — ժամանակաւորապէս: Սակայն 19 Փետրուար 2008-ի նախագահական ընտրութիւններուն եւ անոր յաջորդող օրերուն տեղի ունեցած ընկերային հզօր ցնցումը հիմնովին վերակոփեց ու վերափոխեց Հայաստանի ժողովուրդի հոգիի արիութեան ու խիզախութեան քիմիական բաղադրութիւնը: Երբ Սերժ Սարգսեան հրաժարեցուի եւ Լեւոն Տէր-Պետրոսեան հռչակուի հանրապետութեան օրինաւոր նախագահը, կ'ակնկալենք որ չմոռնայ թէ վերածնած ժողովուրդին իրագործումը պիտի ըլլայ այդ յաղթանակը՝ ամէն բանէ առաջ:*

*Հետեւաբար, օրինաւոր նոր նախագահը ժողովուրդի'ն պարտական պիտի ըլլայ այդ յաղթանակին համար: Ժողովուրդի'ն պէտք է երթայ իր գերագոյն երախտագիտութիւնը, հաւատարմութիւնը: Ամէն բանէ առաջ՝ ո'չ բանակին, ո'չ ոստիկանութեան, ո'չ Ազգային Ժողովի պատգամաւորներուն, ո'չ Սահմանադրական Դատարանին: Եւ ո'չ ալ... հարստապետերուն:*

*Ժողովուրդին հանդէպ հանրապետութեան նախագահի պարտաւորութիւններուն մաս կը կազմեն անոր արժանապատուութիւնը, ազատութիւնը, ապահովութիւնը — ե'ւ նիւթական բարօրութիւնը: Ժողովուրդին հետ ոչ թէ ձեւական, այլ ճշմարի'տ յարգանքով պէտք է վերաբերուի հայրենի պետութիւնը՝ կառավարական յետին պաշտօնեայէն մինչեւ հանրապետութեան նախագահը: Ժողովուրդի'ն համարատու են բոլորը:*

*Պատմական նշանակալի, խիզախ ոստում մը կատարեց Հայաստանի ժողովուրդը Ազատութեան հրապարակին վրայ: Անոր զուգահեռ, խոր հոգեփոխութեան մը ենթարկուեցաւ նոյնինքն Լեւոն Տէր-Պետրոսեանը: Կ'ուզենք հաւատալ թէ հիմա հայը — այս պարագային՝ Հայաստանի հայ ժողովուրդը իր նախագահական թեկնածուով միասին — հին հայը չէ այլեւս: Ազատութեան եւ ինքնավստահութեան նոր, թարմ շունչը սկսած է սաւառնիլ Ազատութեան հրապարակի վերեւ, Երեւանի վերեւ, ամբողջ Հայաստան աշխարհի վերեւ:*

*Ուրեմն, անկախութեան առաջին իսկ օրէն կուրօրէն գովաբանուած եւ առանց հարցափորձի որդեգրուած «ազատ շուկայական» (աւելի ճիշդը՝ սանձարձա'կ շուկայական) համակարգը, որ ճորտերու եւ ստրուկներու վերածեց Հայաստանի ժողովուրդը, պէտք է անհրաժեշտօրէն վերափոխուի եւ փոխարինուի աւելի արդար համակարգով: Անոր բաղկացուցիչներու, նախատիպերու եւ նմոյշ-երկիրներու ուսումնասիրութեան համար մեր նայուածքները պէտք է ուղղել ոչ թէ դրամատիրական ամենէն գիշատիչ տեսակի օրինակներուն, այլ անոնց ամենէն լուսամիտ եւ ընկերային արդարութեան հետամուտ յառաջապահներուն:*

*Ասիկա նուազագոյն առաջադրանքն է պատմութեան ներկայ հանգրուանին, քանի դեռ պատեհ ժամանակը չէ ժողովրդավարական աւելի լայն առումով ընկերային բարեփոխումներ ակնկալելու միջազգային տիրող կացութեան մէջ: Խնդիրը աւելի եւս դժնդակ է Հայաստանի նման փոքր երկրի մը մէջ ուր երեսի վրայ ձգուած է ժողովրդային արդար ընդդիմութեան ճակատագիրը: Այսուհանդերձ, Սովետական ժամանակներու կոպիտ չարաշահումները թող անտեղի պատրուակ չըլլան որ Հայաստանի ժողովուրդի ամբողջ ճակատագիրը յանձնուի երկու անպատասխանատու կիսագրագէտներու եւ ափ մը հարստապետերու անկուշտ քմահաճոյքին: Ի վերջոյ, աւազակապետութենէ աւելի առողջ համակարգի այլընտրանքը կայ, չէ՞:*

*Անոր համար է որ Հայաստանի ժողովուրդն այսօր կը պայքարի — մինչեւ վե'րջ:*

*Ա'յս է Հայաստանի հարստահարուած բայց իր գլուխը վերջապէս վե'ր առած հերոսական ժողովուրդին կամքը:*

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*բռնութիւններին եւ մենակ չթողնել իրենց պայքարող քոյրերին եւ եղբայրներին, այդ լռութիւնը կամ անտարբերութիւնը կարող է ունենալ աղէտալի հետեւանք մեր նորանկախ հայրենիքի եւ մեր ժողովրդի համար:*

*Կոչ ենք անում միջազգային բոլոր կազմակերպութիւններին դատապարտելու բռնարարքները եւ միջոցներ ձեռնարկել խաղաղութեամբ լուծելու Հայաստանում առաջացած ներկայ պրոբլեմները:*

*Հայաստանի Հանրապետութիւնը արժանի է օրինական եւ ժողովրդի վստահութիւնը վայելող իշխանութեան:*

*Կոչ ենք անում ժողովրդին պահպանել իրենց միասնականութիւնը ընդդէմ կեղծիքի ու բռնութեան: Հարկ է որ ողջ ժողովուրդը միասնականութեամբ շարունակի իր պայքարը յանուն հայրենիքի, յանուն սեփական քաղաքացիական իրաւունքների եւ մարդկային արժանապատուութեան:*

*Թող կորչի բռնատիրութիւնը:*

*Թող յաղթի ազատութիւնն ու արդարութիւնը:*

*մարտ 1, 2008*

*hayshvedakankomite@yahoo.se*

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵԿՆԱՐԿԻ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ

*ՀՀ բարձրագոյն խմբի առաջնութիւնը կը մեկնարկի Ապրիլի 6-ին: Այդ օրը տեղի կ՚ունենան «Արարատ»-«Կիլիկիա», «Փիւնիկ»-«Ուլիս», «Գանձասար»-«Բանանց» եւ «Միկա»-«Շիրակ» հանդիպումները: 2-րդ տուրը կը կայանայ Ապրիլի 19-ին: Ուժերը կը չափեն «Ուլիս»-«Արարատ», «Բանանց»-«Փիւնիկ», «Շիրակ»-«Գանձասար», «Կիլիկիա»-«Միկա» զոյգերը: Այդ հանդիպումները կը սկսուեն ժամը 16-ին: Առաջնութիւնը վերջնագիծը կը հատի Նոյեմբերի 15-ին հետեւեալ հանդիպումներով. «Փիւնիկ»-«Արարատ», «Գանձասար»-«Ուլիս», «Միկա»-«Բանանց», «Կիլիկիա»-«Շիրակ»:*

*Հայաստանի գաւաթի խաղարկութեան մեկնարկը կը տրուի Մարտի 21-ին: Ինչպէս տեղեկացրել ենք, այս տարի մրցաշարին մասնակցելու է 14 թիմ, ուստի ՀՀ գաւաթակիր «Բանանցն» ու եզրափակիչի մասնակից «Արարատը» գաւաթային պայքարը կը սկսեն քառորդ եզրափակիչից: 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումներում Մարտի 21-ին Գիւմրիում «Շիրակը» կը հիւրընկալի «Շենգաւիթին»: «Հրազդանում» ուժերը կը չափեն «Կիլիկիան» ու «Միկա-2»-ը, իսկ Արարատում «Միկան» կը մրցի «Արարատ-2»-ի հետ: Յաջորդ օրը «Փիւնիկը» «Նաիրի» մարզադաշտում կը հիւրընկալի «Պատանի» թիմին: Դա «Բանանց-3»-ն է, որը վերանուանուել է «Պատանի»: Այստեղ հիմնականում հանդէս են գալու մինչեւ 17 տարեկանների ՀՀ հաւաքականի թեկնածուները: Կապանում «Գանձասարը» կը մրցի «Փիւնիկի-2»-ի հետ, իսկ Ոսկեհատում ուժերը կը չափեն «Ուլիսն» ու «Բանանց-2»-ը: Խաղերը կը սկսուեն ժամը 15-ին:*

*Մարտի 28-ին կը կայանան պատասխան հանդիպումները: Այդ օրը Ոսկեհատում «Շենգաւիթը» կը խաղայ «Շիրակի» հետ, Աշտարակում «Միկա-2»-ը կը հիւրընկալի «Կիլիկիային»: Աբովեանում կը մրցեն «Արարատ-2»-ն ու «Միկան», իսկ «Բանանցի» մարզադաշտում՝ «Բանանց-2»-ն ու «Ուլիսը»: Յաջորդ օրը «Փիւնիկի» մարզադպրոցում կը հանդիպեն «Փիւնիկ-2»-ն ու «Գանձասարը», իսկ «Բանանցի» մարզադպրոցում «Պատանին» կը հիւրընկալի «Փիւնիկին»:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

*Գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը՝ Տիկ. Անգինէ Քէշիշեան-Մուրատեան $50 տոլար կը նուիրէ:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ԼՈՒՍԻՆ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ յաջող գործողութեան առթիւ Պրն. Գէորգ Գալուստեան արագ ապաքինում կը մաղթէ անոր:*

*Առ այդ $100 կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Տօքթ. եւ Փրոֆ. Սարգիս եւ Սիլվա Գարայեաններ իրենց երկրորդ թոռնիկին՝ Փաթիլ Գարակէօզեանի ծննդեան ուրախ առիթով կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները:*

| | |
|---|---|
| «Մասիս» Շաբաթաթերթին՝ | $100 |
| Նոր Սերունդ Մշակութային Միութեան | $100 |
| «Նոր Օր» Շաբաթաթերթին | $100 |
| «Թէքէեան» Մշակութային Միութեան | $100 |
| «Նոր Կեանք» Շաբաթաթերթին | $100 |
| Armenian Observer Շաբաթաթերթին | $100 |

### ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

*Տէր եւ Տիկ. Ժագ եւ Արմինէ Գալանճեանի առջինեկ աղջիկ զաւակով մը բախտաւորուելու ուրախ առիթով, որ անուանած են Իզապէլ, Լուիզիանայէն Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Հայկօ Գալթագճեաններ կը շնորհաւորեն ընտանեկան պարագաները, յատկապէս նորածինի մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեանները:*

*Առ այդ $200 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*


**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**

**CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ**

**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00



**ՔԱՋ ՆԱԶԱՐ**

**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

Ամէն Կիրակի երեկոյեան

ժամը 10:00-ից 12:00

Կլէնտէյլի 26-րդ կայանից


### ԱՐՈՆԵԱՆԸ ԵՒ ՏՈՊԱԼՈՎԸ ԿԻՍԵՑԻՆ ԼԻՆԱՐԵՍԻ ԳԵՐՄՐՑԱՇԱՐԻ 3-4-ՐԴ ՏԵՂԵՐԸ



*Հայաստանցի գրոսմայստեր Լեւոն Արոնեանը եւ բուլղարացի գրոսմայստեր, շախմատի աշխարհի նախկին ախոյեան Վեսելին Տոպալովը կիսեցին Մորելիա-Լինարեսի գերմրցաշարի 3-4-րդ տեղերը:*

*Նախօրէին աւարտուած մրցաշարի յաղթողն է հնդկաստանցի գրոսմայստեր, աշխարհի ախոյեան Վիշվանաթան Անանդը, ով վաստակել է 8,5 միաւոր: 8 միաւորով երկրորդ տեղում է նորվեգացի Մագնուս Կարլսենը:*

*Արոնեանը եւ Տոպալովը վաստակել են 7,5-ական միաւորով:*

*Վերջին տուրում Արոնեանը ոչ ոքի է խաղացել հունգարացի Պետեր Լեկոյի հետ:*

### ԴԱՒԻԹ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ 7-ՐԴՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

*Արժենթինահայ թենիսիստ Դաւիթ Նալբանդեանը 2050 միաւորով պահպանեց 7-րդ տեղն այսօր պրոֆեսիոնալ թենիսի ասոցիացիայի կողմից հրապարակուած աշխարհի լաւագոյն թենիսիստների շաբաթական ցուցակում: Ցուցակի առաջատարն է շուէյցարացի Ռոժէ Ֆեդերերը՝ 6630, 2-րդ տեղում է Սպանացի Ռաֆայէլ Նադալը՝ 5980, 3-րդ՝ սերբ Նովակ Ջոկովիչը՝ 2750 միաւոր:*

---

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԱՆԿԵԱԼ ԶԵԿՈՅՑԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*ուղղուեն վարչական դատարան:*

*Դիտորդական առաքելութիւնը արձանագրում է, որ թեկնածու Արամ Յարութիւնեանի ներկայացրած ցուցակը իր կողմից պահանջուած ՏԸՀ-ներում վերահաշուարկ կատարելու մասին տարբերւում է նոյն թեկնածուի կողմից ԿԸՀ-ին ներկայացրած ցուցակից, ինչը դիտորդները որակել են որպէս «շփոթեցնող փաստ»: Ընդ որում, որոշ դէպքերում, օրինակ թիւ 1, 4, 13 ԸԸՀ-ում յանձնաժողովը չի իրականացրել այլ թեկնածուների կողմից պահանջուած վերահաշուարկը, քանի որ զբաղուած է եղել պարոն Յարութիւնեանի պահանջով իրականացուող վերահաշուարկով:*

*Բացի այդ, ըստ դիտորդական առաքելութեան, դիտարկուած վերահաշուարկների մեծամասնութիւնը ցոյց է տուել, որ առաջնային հաշուարկում կային անհամապատասխանութիւններ ու սխալներ, որոնց մի մասը նշանակալի էր եւ կասկածի տակ էր դնում ՏԸՀ-ների եւ ԸԸՀ-ների քաղաքական անկողմնակալութիւնը:*

*Թիւ 5 ԸԸՀ-ն՝ Դաւիթաշէն, օրինակ, անգործութիւն է ցուցաբերել Փետրուարի 23-ին թիւ 5/21 ՏԸՀ-ում վերահաշուարկի, ինչպէս նաեւ անյայտ անձանց կողմից ԸԸՀ-ն գրոհելու վերաբերեալ, ովքեր սպառնացել են ԸԸՀ-ի անդամներին եւ այլ իրաւասու անձանց, այդ թւում՝ թեկնածուների վստահուած անձանց, լրագրողների, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդի հեռանալ յանձնաժողովի տարածքից, մինչդեռ ոստիկանները պասիւօրէն կանգնած են եղել:*

*Նոյն օրը թիւ 13/10 ՏԸՀ-ում արդիւնքների վերահաշուարկի ժամանակ Լեւոն Տէր-Պետրոսեանի օգտին քուէարկած թերթիկների ծրարն անհետացել է:*

*Այլ թերութիւնների թւում էին քուէաթերթիկների ոչ անհրաժեշտ դասումը որպէս անվաւեր եւ քուէաթերթիկների վրայ կատարուած նշումների կամ դրանց վաւեր լինելու ուսումնասիրութեան չկատարումը:*

*Զեկոյցը փաստում է, որ վերահաշուարկի իրականացման վերջնաժամկէտի սպառման պահին 24 ՏԸՀ-ների կողմից վերահաշուարկ դեռ կատարուած չէր:*

*«Չնայած օրէնսդրութիւնը նախատեսում է, որ ԸԸՀ-ները կարող են երկարաձգել իրենց աշխատանքային ժամերը, այդուամենայնիւ, առաքելութիւնը չունի տեղեկատուութիւն, որ որեւէ ԸԸՀ այդպէս է վարուել աշխատանքն աւարտելու համար»:*

*Անդրադառնալով ընտրութիւնների արդիւնքների վերջնական հրապարակման փուլին, առաքելութիւնը փաստում է, որ իւրաքանչիւր ՏԸՀ-ի համար ԿԸՀ-ի կողմից թողարկուած արդիւնքները պարունակում են մի շարք անորմալ արդիւնքներ:*

*«Հայաստանում կան 1923 ընտրատեղամասեր, որոնցից 95-ում մասնակցութիւնը գերազանցել է 90 տոկոսը, այդ թւում՝ 44-ում մասնակցութիւնը եղել է աւելի քան 95 տոկոս»:*

*«Նոյնիսկ հաշուի առնելով Սերժ Սարգսեանի սերտ ընտանեկան կապերը Գորիսի շրջանում, 4 ՏԸՀ-ների արդիւնքները ապշեցուցիչ են այն պատճառով, որ նա այստեղ ստացել է քուէների աւելի քան 99 տոկոսը», - արձանագրուած է զեկոյցում:*

*Որոշ դէպքերում քուէատուփում եղած թերթիկների թիւը գերազանցել է ընտրողներին տրուած քուէաթերթիկների թիւը, կամ հակառակը՝ նշանակալիօրէն պակաս եղել:*

### ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Մարտ 23 | Զատկուայ Տօնակատարութիւն |
| Ապրիլ 5 | Spanish Night |
| Ապրիլ 26 | Las Vegas Trip |
| Մայիս 11 | Մայրերու Օրուայ Նախաճաշ |
| Յունիս 14 | Հայրերու Օր |
| Օգոստոս 10 | Հանգանակային Ճաշկերոյթ «Մասիս» շաբաթաթերթի |
| Հոկտեմբեր 4 | Հ.Մ.Մ.ի Տարեկան Պարահանդէս |
| Դեկտեմբեր 31 | Նոր Տարուայ Խրախճանք |

# «ԶԷՆՔ ԸՆԿՐԿԻ ՈՐԵՒԷ ՈՒԺԻ ԱՌԱՋ»

*Շարունակուած էջ 5-էն*

*չունենան եւ հիմա էլ դատապարտում ենք, եւ յայտարարում ենք, որ դա կապ չունի մեր պայքարի հետ: Ի դէպ ցուցարարների շարքերում մեծ թիւ են կազմել քաղաքացիական հագուստով ոստիկանները հանրապետութեան տարբեր մարզերից: Եղել են նաեւ յայտնի օլիգարխների թիկնազօրի ներկայացուցիչներ:*

-Երէկ արդեն տեղեկատուութիւն ստացուեց, որ բաւական լարուած է Ղարաբաղի եւ Ատրպէյճանի շփման գիծը: Ձեր կարծիքով ի՞նչ են նշանակում այդ գործողութիւնները՝ արդեօք Ղարաբաղին անմիջական պատերազմի վտանգ է սպառնում:

*- Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը շատ լաւ հասկանում են, որ այն պահից երբ տանկերը հանուեցին Երեւանի փողոցներից, իրենք այլեւս իշխանութիւն չեն ունենալու: Նրա յայտարարած արտակարգ դրութիւնը ապօրինի է, որովհետեւ Սահմանադրութիւնը յստակ ասում է, որ արտակարգ դրութեան իրական ռեժիմը սահմանւում է օրէնքով: Իսկ այսօր Ռոբերդ Քոչարեանը ինչ-որ իրական ռեժիմ է սահմանել իր հրամանագրով, ինչը նշանակում է, որ իրական ռեժիմը, գրաքննութիւնը, թերթերի փակումը եւ միւս բոլոր սահմանափակումները ապօրինի են: Հիմա Ռոբերդ Քոչարեանի այդ արտակարգ դրութիւնը չի կարող երկար տեւել, 20 օրով է յայտարարուած: Ռոբերդ Քոչարեանին անհրաժեշտ է, որպէսզի նա այս տանկերի ռեժիմը կարողանայ աւելի երկար պահպանել, իսկ դրա համար յարմար է ռազմական դրութիւն յայտարարելը: Եւ ես կարծում եմ, որ Քոչարեանի սցենարներից մէկն է դա, որպէսզի իրենք սահմանների վրայ հրահրէին ինչ-որ սահմանային բախումներ, ինչի արդիւնքում Հայաստանում հնարաւոր կը լինի ռազմական դրութիւն մտցնել, որը օրէնքով սահմանուած է եւ կարող է տեւել վեց ամիս, մէկ տարի: Դա նշանակում է, որ ինքը կը շարունակի պաշտօնավարել նախագահի պաշտօնում, քանի որ ռազմական դրութեան ժամանակ նախագահի ընտրութիւններ չեն անցկացնում եւ գործող նախագահը շարունակում է իր պաշտօնավարումը: Կարծում եմ, որ սա Ռոբերդ Քոչարեանի պահեստային սցենարներից մէկն է:*

-Սահմանային բախումներից անմիջապէս յետոյ ՀԿ-ում ՆԱՏՕ-ի յատուկ ներկայացուցիչ Ռոբերդ Սիմոնսը յայտարարեց, որ դաշինքը պատրաստ է աջակցել հայ-ատրպէյճանական սահմանում խաղաղութիւնը վերականգնելուն: Ձեր կարծիքով դա կարող է խոչընդոտ հանդիսանալ Ռոբերդ Քոչարեանի այդ սցենարի իրականացմանը:

*-Ես չեմ կարող տուեալ պահին մեկնաբանել դա, բայց կարծում եմ, որ ե՛ւ ՆԱՏՕ-ն, ե՛ւ Ռուսաստանը, ե՛ւ ողջ միջազգային հանրութիւնը հասկանում են, որ Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը պատրաստ են ամենածայրայեղ քայլերի իրենց իշխանութիւնը պահպանելու համար եւ կարծում եմ, որ Ռուսաստանն ու Արեւմուտքը թոյլ չեն տա տարածաշրջանում պատերազմ հրահրել յանուն մէկ-երկու հոգու իշխանութեան պահպանման:*

-Ինչպէ՞ս են Լեւոն Տէր-Պետրոսեանն ու նրա կողմնակիցները շարունակելու իրենց պայքարը եւ ժողովրդական շարժումը:

*-Պայքարի սցենարներն արդէն կան: Գիտէք, որ ակտիւիստների հիմնական մասը ձերբակալուած է կամ վիրաւորներ, ցուցարարների շարքերում կան զոհեր: Իմիջիայլոց Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը իբր սգում են տեղի ունեցածի համար: Ութ զոհ է եղել. եթէ այդքան սգում են, ինչո՞ւ Հայաստանում սգի օր չի յայտարարուած: Սա ամենաառաջին հարցն է, որ պէտք է նրանց ուղղել: Սգի օր չյայտարարելով, նրանք ընդունում են, որ հենց այդպէս էլ պէտք է լինէր: Ինչ վերաբերում է մեր հետագայ պայքարին, այդ պայքարի սցենարը շարունակում է մնալ նոյնը, մենք կը կազմակերպենք հանրահաւաքներ խաղաղ գործողութիւններ եւ չենք ընկրկի որեւէ ուժի առաջ: Ես համոզուած եմ, որ այս պահից Ռոբերդ Քոչարեանի իշխանութեան վերջին մնացել է մէկ, երկու, առաւելագոյնը երեք հանրահաւաք: Կարծում եմ, որ այդ դէպքերից յետոյ զինուորականութիւնը հասկացաւ, որ ժողովուրդը վճռական է տրամադրուած, հասկացաւ, որ իրենք գործ ունենք մարդասպան հրամանատարների հետ, որոնք ուզում են երկիրը ներքաշել եղբայրասպան պատերազմի մէջ:*

*Ես կարծում եմ, որ այսօր Ռոբերդ Քոչարեանը փորձում է այս 20 օրն օգտագործել ընդդիմութեան լիդերներին չէզոքացնելու համար, սակայն կարծում եմ, որ անգամ նման գործողութիւնները չեն կարող հետագայ իրադարձութիւնների վրայ ազդեցութիւն ունենալ, քանի որ մենք գործ ունենք իրապէս համաժողովրդական շարժման հետ, որը քոչարեանասերժական յանցագործ իշխանութիւնից ազատուելու որոշում արդէն կայացրել է, մնում է միայն այդ որոշումը իրագործել, եւ ես կարծում եմ, որ այդ որոշման իրագործումը ընթացքի մէջ է: Մենք բոլորս պէտք է հասկանանք, որ ժողովրդի համբերութեան բաժակը լցուել է եւ նա այլեւս ոչ մի պայմաններում չի հանդուրժի այս յանցաւոր իշխանութեանը: Պէտք է հասկանանք նաեւ, որ այսօր հանրութիւնը Գագիկ Ջհանգիրեանի ձերբակալութիւնը համարում է ուղղակի ապացոյց այն բանի, որ Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանն են կազմակերպել Հոկտեմբերի 27-ը, հանրութիւնը հասկանում է, որ նրանք տանկերը հանել են փողոց այս եւ բազմաթիւ այլ յանցագործութիւնների պատասխանատուութիւնից խուսափելու համար եւ ամենակարեւորը՝ հանրութիւնը հասկանում է, որ սա ոչ թէ Լեւոն Տէր-Պետրոսեանի պայքարն է, այլ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացու եւ եթէ քաղաքացին այս պայքարում ընկրկի, կը նշանակի որ նա դաւաճանում է սեփական հայրենիքին եւ այդ հայրենիքը դատապարտում չգոյութեան:*

-Պարոն Փաշինեան, այս օրերին Ռոբերդ Քոչարեանը հեռուստաեթերից մի քանի խմբերի է բաժանում Մարտի մէկի տեղի ունեցածի մասնակիցներին: Դուք, օրինակ, յայտնուել էք հրահրիչների խմբում:

*-Տուեալ իրավիճակում հրահրողի դեր կատարում են միայն յանցագործ իշխանութիւնները, ովքեր իրենց յանցագործութիւնների մէջ 10 տարուայ ընթացքում օրի լկտիացել են, ինչի արդիւնքում մարդկանց հասկացրել են, որ իրենց հետ հնարաւոր չէ խօսել մարդկային լեզուով: Հոկտեմբերի 27, Պօղոս Պօղոսեանն, «Տեցի Կռուգ»«, Բիւզանդի փողոց, Ապրիլի 12, ընտրակեղծիքներ, ընդդիմութեան վստահուած անձերի ծեծուջարդ, քաղաքական հետապնդումներ, «Ա1պլիւսի»-ի փակում պետական գոյքի ունեցուածքի թալան, պետական պաշտօնեաների գեխ ապրելակերպ եւ այլն. ահա այս գործողութիւններն են մարդկանց հրահրում դուրս գալ փողոց եւ քոչարեանասերժական յանցագործ իշխանութիւններին ասել հեռեւեալը. չի կարելի հանրութիւնը սեփական լկտիութեան փորձադաշտ դարձնել, չի կարելի փորձել ժողովրդի համբերութիւնը, չի կարելի նստել ժողովրդի գլխին: Եւ եթէ այս զգուշացումներից յետոյ վարչախումբը մտադիր չէ իրեն հաւաքել, հանրութիւնը պէտք է դիմի վճռական քայլերի:*

-Յաւաստի տեղեկութիւններ կան, որ իշխանութեան ամենաբարձր օղակներից հրահանգուած է ԱԱԾ-ին ձեզ ոչ թէ ձերբակալել, այլ ֆիզիկապէս ոչնչացնել՝ զինուած դիմադրութեան իմիտացիա ստեղծելով: Ի՞նչ կ'ասէք այս մասին:

*-Ես ուզում եմ ասել, որ երբէք զէնք չեմ ունեցել եւ զէնք չեմ կրել, այս պահին էլ զինուած չեմ եւ չեմ էլ պատրաստւում զինուել: Իմ, ըստ էութեան ընդհատակում գտնուելու պատճառը ոչ թէ ձերբակալուելուց խուսափելն է, այլ այն, որ ես կարծում եմ որ որոշակի պատասխանատուութիւն եմ կրում շարժման հետագայ ընթացքի համար եւ ընդհատակում գտնուելու շարժաւիթը միայն հետագայ պայքարը կազմակերպելու գործում համեստ ներդրում ունենալն է: Ինչ վերաբերում է զինուած լինելուն, ասացի որ կեանքում զէնք չեմ ունեցել, այս պահին էլ զինուած չեմ եւ չեմ էլ պատրաստւում զինուել: Ես զինուած եմ միայն քաղաքացիական վճռականութեամբ. պայքար, պայքար մինչեւ վերջ:*

*«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՀԱՅԿԱԶ ՇԻՐՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան միջ-եկեղեցական յարաբերութեանց («էքիւմէնիք») բաժնի տնօրէն՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեանին:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ողբացեալ ՅԱԿՈԲ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻՆ մահուան տխուր առթիւ Դամասկոսի Թարգմանչաց Վարժարանի ուսանողական Միութիւնը (Լոս Անճելոս) իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ստեփան եւ Ժուլիէթ Յովակիմեաններուն:*

*Առ այդ $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՅԱԿՈԲ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻՆ մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Սրբուհի Մուրատեան իրենց խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ստեփան եւ Ժուլիէթ Յովակիմեաններուն:*

*Առ այդ $50 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*


# Palm Springs

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |



*Մանրամասների համար հեռաձայնել՝*

**(818) 246-0125**

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

# International Academy of Los Angeles

## Presents

## An Evening Honoring Composer, Director & Pioneer of Armenian Television

# SARKY MOURADIAN




**Manuel**
**Kevin George**
**Chuko**
**Andre Danik**
**Narine Shahbazian**
**Salpi Mayelian**
**Hovik Krikorian**
**Harut Hakopian**
**Jenny Armen**
**Flora Martirosian**
**Adiss Harmandyan**
**Vatche**
**Hovik Grigorian**
**Levon Sevan**
**Maxim**
**Raffi Khardalian**
**Razmik Mansourian**
**Armen Aloyan**

**Hosts: Anahit Martirossian, Aramayis Gharibyan, Noune Serobian**

**Thursday, April 10, 2008, 7:30 p.m.**

**ALEX THEATER**

**216 North Brand Blvd., Glendale, California 91203**

**FOR TICKETS CALL: (818) 913-2299 (818) 265-0506**

FOR INFORMATION CALL: (818) 243-5722